№ 150 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 12 ՅՈՒԼԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 12 ՅՈՒԼԻՍԻ № 150

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ՍՄՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Ղարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յուլիսի 9-ին, երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց տէր-Արիստակէս աւագ-քահանայի այրի

ԵՐԻՑՈՒՀԻ ՀՈՒՓՍԻՄԷ ԲԷՆԿԼԵԱՆՑԸ,

որի մասին հանգուցեալի որդիքը իրանց ամուսիններով ծանուցանում են ազգականներին և ծանօթներին. Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի ընտկարանից (Եկղեսրեսկայա, № 10, սեփական տուն) դէպի ս. Նշան եկեղեցին. Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը.

503. 2—2

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ՇՈՒԹԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՈՒՍ“

սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ

ՆԵՐԿԱՅ ՅՈՒԼԻՍԻ 1-Ի՝Ց „ՌՈՒՍ“ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄՈՒԾՎԱԾ Է ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԾԻ ՄԷՋ:

Ընկերութեան նաւատորմը բաղկացած է 35 առաջնակարգ շոգենաւերից:

ՇՈՒԹԵՆԱՒԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ.

Բագուից մինչև Պետրովսկ, Ասարխան, Կրասնովոդսկ և վերադարձ՝ շաբաթական 3—5 անգամ:
Աստրախանից մինչև Նիժնի ու Իրբիտկ և վերադարձ՝ ամեն օր:
Մոսկվայից մինչև Նիժնի և վերադարձ Մոսկվա գետի վրայով՝ շաբաթական 4 անգամ:
Վոլգայի վրայով երթևեկում են ամերիկ. տիպի երկայրանի մարգատաք շքեղ շոգենաւեր: Ընկերութիւնը պ. պ. ապրանքատէրերին ծանաչութիւն մատուցած լինելու համար ունի ընդարձակ ու ծածկված պահեստներ Նիժնի-Նովգորոդում (Սիբիրեան նաւատանգատում), Բագուում, Մոսկվայում և այլ կէտերում: Թիֆլիսի գործակալութիւնը—(Վեր.Մաշտոցեանց, № 18. Տէլէֆոն № 11) ընդունում է ապրանքներ և ապահովագրում թէ ճանապարհին և թէ պահեստներում գտնվելու ժամանակ՝ ամենաձեռնտու պայմաններով:

(Ն.Հ.) առ. 496. 3—3

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
291. 50—20 (Հ. Կ.)

ՊԱՏԻԺԸ ԲՈԼՈՐ ԾԱՆՑԱԻՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ՄԻԱՏԵՍԱԿ ԼԻՆԻ

II

Եւրոպական բոլոր երկիրներում կան և գործում են բազմաթիւ քաղաքական կուսակցութիւններ: Ամենից ազատ և ազատախոհ երկիրը համարվում է Անգլիան: Արդ, եթէ Անգլիայում, դիցուք սօցիալ-դեմօկրատների կուսակցութիւնը կամ այդ կուսակցութեան պատկանող անդամներ մի օր վեր կենային և գնային մի դատարան, ուր քննվելիս լինէր իրանց վերաբերեալ մի դատ, և այժմ, բռնութեամբ, սպառնալիքներով հարկադրէին դատաւորներին փոխել իրանց վճիռը կամ ի նպաստ իրանց վճիռ արձակել, ինչ էք կարծում, ինչ կը պատահէր:

Կը պատահէր այն, որ բովանդակ Անգլիան՝ մեծից փոքր, մանուկից սկսած մինչև ծերը, ոտքի կը կանգնէր և բողոքի, անէծքի այդպիսի մի զարհուրելի աղաղակ կարձակէր, որ ամբողջ երկիրը կը դղրդար: Եւ ոչ մի իշխանութիւն, ոչ մի դատարան մի րօպէ իսկ չէր վարանի բռնութիւն գործողներին, իբրև սովորական քրէական յանցաւորների, յանձնել ոստիկանութեան և արդարադատութեան ձեռքը: Այդ վարմունքը ամբողջ Անգլիան և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը օրինաւոր և անհրաժեշտ կը գտնէր:

Եթէ մի քանի տարի առաջ, երբ դաշնակցականները Կ. Պոլսում բռնութիւն և օսմաններ գործ դրին ազգային ժողովի երեսփոխանների վրա, որպէս զի ստիպեն նրանց կատարել իրանց կամքը, եթէ որ, կրկնում ենք, այդ ժամանակ Դուրեան պատրիարքը և նրա նախագահութեամբ գործող ազգային վարչութիւնը՝ օրինական միջոցներ ձեռք առած լինէին այդ բռնակալներին պատժել տալու, քրէական պատասխանատուութեան ենթարկելու, այսօր դաշնակցականները այլ ևս չէին յանդգնի վերսկսել իրանց բռնակալական գործողութիւնները:

Պէտք է շնորհակալ լինել, որ այժմեան ազգային վարչութիւնը իր գլուխ Արշարունի պատրիարքի հետ միասին ըմբռնեցին անհրաժեշտութիւնը՝ դիմել ոստիկանութեան և արդարադատութեան և թոյլ չը տալ, որ մի խումբ մարդիկ իրանց կամքը առաջ քշելու համար ոտնակոխ անեն ազգային պատիւը, ազգային վարչութեան հեղինակութիւնը: Այն հանգամանքը, որ այդ բռնապետները պատկանում են մի կուսակցութեան, որ անուանում է իրան յեղափոխական, քաղաքական, երբէք չը պէտք է յետ կասեցնէ ազգային վարչութիւնը իր պարտականութիւնը կատարելուց այն առարկութեամբ, թէ բռնութիւն գործողները յեղափոխականներ են կամ պատկանում են այս և այն քաղաքական կուսակցութեան: Ով բռնութիւն է գործ դնում, ով կամենում է բռնութեամբ, օգտվելով առաջ քշել իր կամքը, լինի նա յեղափոխական, պահպանողական կամ սոսկ անհատ, այնպիսին պէտք է նկատվի իբրև յանցաւոր և նրա վերաբերմամբ պէտք է գործադրվի նոյն պատիժը, որը գործադրվում է բոլոր քրէական յանցաւորների համար:

Կ. Պոլսի հայ հասարակութիւնն է մեղաւոր, որ այսօր դաշնակցականները նրա գլխին նստել են և ծեծել են ուզում: Նա հարկաւոր ակտիվ դիմադրութիւն ցոյց չէ տալիս նրանց խելքի բերելու համար: Եւրոպական ազգերը կենթարկէին այդպիսի կեղծ-յեղափոխականներին—որովհետև ոչ մի ազնիւ, շիտակ յեղափոխական կամ քաղաքական գործիչ թոյլ չի տայ իրան բաշիբուզուկի դերում լինել—օսմարկիզմի, վտարման, կը մերժէին որևէ հաղորդակցութիւն, շփումն ունենալ նրանց հետ և այդպիսով կը հարկադրէին նրանց զղջալ ու խելքի գալ:

Ամեն բան ներելը, ամեն բանի համբերելը ոչ միայն առաքինութիւն չէ, այլ և ապիկարութիւն, թուլամորթութիւն:

Դէպի անուղղելի յանցաւորները խիստ պէտք է լինել:

Հ. Առաքելեան

ՄԻԱՊԵՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յուլիսի

Ռէյդ-Շտանդարտ.—Եվէդական թագաւորի հանդիպման առիթով բոլոր նաւերը նաւահանգստում զարդարված են դրօշակներով. Կայսերական «Շտանդարտ» դրօսնաւի վրա բարձրացրին Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի շտանդարտը. Եղանակը շատ լաւ է:

Առաւօտեան թագաւորին ընդ առաջ գնաց Հէլսինգֆօրսից շվէդական դեսպան Բրենդտրէմը: Նոցին թագաւորական մեծութիւնները գալիս են «Օսկար II» զրահանաւով մի քանի ռազմանաւերի ուղեկցութեամբ:

Ժամը 12-ին շվէդական թագաւորը և թագուհին ժամանեցին «Օսկար II» ով. Միւս նաւերի վրա ծածանվում էին ռուսական դրօշակներ: Հէնց որ նաւատորմը մտաւ նաւահանգիստը, «Շտանդարտից» տուած ազդանշանով «Բայեանը» և «Պօլտաւայա Զվէզդան» թնդանօթներ պարպեցին: Եվէդական նաւատորմը պատասխանեց. օրհնաբանությունը նուագեց շվէդական հիմնը:

Ժամը 11 և 45 ր. «Օսկար II-ը» կանգ առաւ «Շտանդարտի» կողքին: Նորին Կայսերական Մեծութիւնը Մեծ Իշխանուհիներ Օլգա Նիկոլայէվնայի և Տատիանա Նիկոլայէվնայի հետ միասին բարեհաճեց նաւակով գնալ «Օսկար II» ողջունելու թագաւորին և թագուհուն: Կայսրը հագել էր շվէդական նաւատորմի ծովակալի հագուստ: Նաւակում կային նաև պաշտօնական անձինք: Կայսրի նաւ մտնելու րօպէին բարձրացվեց Նորին Մեծութեան շտանդարտը: Եվէդական նաւերը թնդանօթներ են արձակում. ռուսական նաւերը պատասխանում են:

Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխանուհիները դիմաւորվեցին զրահանաւի տախտակամածի վրա թագաւորից և թագուհուց: Նոցին Մեծութիւնները համբուրվեցին: Կայսրը և թագաւորն անցան նաւի պահակախմբի առաջից: Երաժշտախումբը նուագեց ռուսական հիմնը:

Ժամը 1-ի սկզբին թագաւոր Կայսրը Մեծ Իշխանուհիների հետ թնդանօթների պարպումով վերադարձան «Շտանդարտ»:

Մի փոքր անց թագաւորը և թագուհին շոգենաւակով թագաւորական շտանդարտով անցան «Շտանդարտ» զրօսնաւը: Այդ պահին վերջինիս վրա ժողովվել էին Պալատի, ներքին գործերի և ծովային մինիստրները. Նոցին Մեծութիւնների շքախմբի անձինք, ֆինլանդական գեներալ-նահանգապետը, Ստոկհոլմի ռուսական դեսպանը, Բարձրագոյն Պալատի անձինք, Վրբօրգի նահանգապետը, ծովակալներ և 1-ին կարգի նաւապետները և այլն: Այստեղ եկան նաև թագաւորի շքախմբի անձինք, Պետերբուրգի շվէդական դեսպանը և շվէդական նաւատորմի նաւերի հրամանատարները. Նոցին մեծութիւններին դիմաւորեցին թագաւոր Կայսրը, թագուհի Կայսրուհին, Դահաժառանգը և Մեծ Իշխանուհիները: «Շտանդարտի» վրա բարձրացրին շվէդական դրօշակ: «Բայեանը» թնդանօթներ պարպեց, շվէդական նաւերը պատասխանեցին: Թագաւորը ռուսական ծովապետի համազգեստով էր Անդրէեվի ժապաւէնով: Կայսրը և թագաւորն անցան պահակախմբի մոտով շվէդական հիմնի նուագածութեամբ:

Ապա ժամը 1-ին Նոցին Մեծութիւնների մօտ կայացաւ պաշտօնական նախաճաշ:

Նախաճաշից յետոյ, ժ. 3 ի մօտերը թագաւորը և թագուհին շվէդական հիմնի նուագածութեամբ. ռուսաց նաւերի թնդանօթաձգութեամբ մեկնեցին շքախմբի հետ «Օսկար II» զրահանաւը: Ժամը 4-ին Նոցին Մեծութիւնները Մեծ Իշխանուհիների հետ անցան «Օսկար II» և վերադառնալ բարեհաճեցին ժամը 6-ին մօտ:

Եվէդական թագաւորի շքախմբի մէջն է նաև արտաքին գործերի մինիստր կոմս Լէրնսվէրդը:

Նորին թագաւորական բարձրութիւն պրինց Վալդէմարը մեկնեց արտասահման:

Ժամը 8-ին երեկոյեան «Շտանդարտի» վրա կայացաւ պաշտօնական ճաշ: Կենտրօնական տեղերը գրաւել էին Նոցին Կայսերական Մեծութիւններ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին: Կայսրի աջ կողմում նստել էր շվէդական թագուհին, իսկ Կայսրուհու կողքին՝ թագաւորը:

Եվէդական թագաւորը շնորհեց Կայսերական Պալատի մինիստրին Նոցին մեծութիւնների լուսանկարը՝ մակագրութեամբ, արտաքին գործերի մինիստր Սազոնովին՝ Սէրաֆիմովի շքանշանը, ծովային մինիստրին՝ առաջին կարգի թուր և այլն:

Նորին Կայսերական Մեծութիւնը շնորհեց շվէդական արտաքին գործերի մինիստրին Ալէքսանդր Նէվսկիի շքանշան և նաւատորմի հրամանատար Դիրսէնին՝ Անայի 1 ին կարգի շքանշանը:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յուլիսի

[illegible] կան. «Русск. Инвалидъ»-ում տրպված է. «Այս յուլիսի 1-ին, երեկոյեան ժամը 8 ու 30 րօպէին, Տաշկէնտի մօտի Տրօյիցկի գիւղում, Թուրքեստանի առաջին ու երկրորդ սապեօր բատալիօնների բանակում, մի խումբ զինուորներ 100—130 մարդ, ժողովվելով բանակի առաջ, «ուրա» աղաղակներով անկարգ հրացանաձգութիւն սկսեցին օդի մէջ: Տեսնելով որ ոչ ոք իրանց չէ միանում և որ վաշտերն են վերադառնում օֆիցէրները, ապտամբները կրակ բացին բանակի ուղղութեամբ: Ապըստամբներին ամենից առաջինը դէմ կանգնեց երկրորդ բատալիօնը՝ կապիտան Ժիլցովի առաջնորդութեամբ: Դրանից յետոյ կապիտան Ժիլցովի վաշտին միացան առաջին և երկրորդ բատալիօնների հաւատարիմ մնացած զինուորները: Այդ ժամանակ կանչվեցին միւս զօրամասերը:

Յետ մղվելով սապեօրներից, ապըստամբները, սատկութեամբ կրակելով, յարձակվեցին մօտեցող զինուորների վրա. վերջիններս նոյնպէս կրակ բացին և ստիպեցին անկարգներին ցրվել և յետոյ առանց կրակի, նուագել տալով «Տէր պահեա զԿայսրն մեր», դիմեցին դէպի սապեօրների բանակը և շրջապատեցին նրան կօզակների հետ միասին:

Արշալոյսին ամեն կողմից սկսեցին սապեօրների բանակը վերադառնալ անկարգութիւնների ժամանակ ցիրուցան եղած զինուորները, որոնց իսկոյն զինաթափ արին և կալանաւորեցին: Այդ տեսակ սապեօր զինուորներ կալանաւորվեցին 170 հոգի, որոնցից անշուշտ մի քանիսն էին սոսկ մասնակցել ապըստամբութեանը, իսկ մնացածները վախից շտապել էին գլուխներն ազատել:

Յուլիսի 2-ի առաւօտեան դէմ բանակում կարգուկանոնը վերահաստատվեց վերջնականապէս, ըստ որում սապեօրները շրջապատվեցին զօրախմբերով և կօզակներով.

Յուլիսի 2 ին դէպքի տեղն եկաւ Թիւրքեստանի զինուորական շրջանի զօրքերի հրամանատարը և անձամբ համոզվեց, որ կարգուկանոնը վերահաստատված է:

Ապստամբների արձակած գնդակներից սպանվեց շտաբս-կապիտան Պոխվիսնէվ, ծանր վիրաւորվեցին պօդպօրուչիկ Շադրին, պօդպօրուչիկ Կրասօվսկի, որը շուտով մեռաւ, պօդպօրուչիկ Կոշինէց, թեթև՝ կապիտան Ժիլցով. բացի դրանից վիրաւորված են կապիտան Սկօպին, մի զինուոր և 11 սապեօր, որոնցից 1-ը մեռաւ:

Բարձրագոյն հրամանով կապիտան Ժիլցովը դառնում է փոխ գնդապետ:

—

Մոսկվա.—Բացվեց գրավաճառների և գրքեր հրատարակողների երկրորդ համառուսական համագումարը: Նախագահ ընտրվեց Կիէվի գրավաճառ Բօզովը: Համագումարը բաժանվեց երկու սեկցիայի: Եկել են 200 անդամ: Համագումարին կից կայ գրքերի ցուցահանդէս:

Մինիստրների խորհրդի նախագահը այցելեց իշխան Կացուրային:

Լօնդոն.—Համայնքների պալատ: Ասկվիտը յայտնեց, որ Անգլիան իր կամքի հակառակ մասնակցում է մեծ պետութիւնների ծովային փոխադարձ մրցութեանը, որը նրանից անկախ է յարուցվել: «Մենք անհրաժեշտ են մեր ծովափերի ապահովութեան, առևտուրը անվտանգ դարձնելու, ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար: Այդ դեկավար րօպէ է անգլիական քաղաքականութեան մէջ. Ինչ տեսակ էլ որ կուսակցութիւն կանգնած լինի իշխանութեան գլուխ, ինչ տեսակի էլ որ մեծ պետութիւններ խմբակցութիւններ գոյս թիւն ունենան, Անգլիան չէ կարող Միջերկրական ծովը համարել այնպիսի թատերաբեմ, ուր նա չունենայ սեփական շահեր կամ ուր նա կարողանայ ուրիշներին թողնել իր շահերի հոգացողութիւնը»: Յետագայ վիճաբանութիւններից յետոյ նաւատորմի լրացուցիչ գումարը ընդունվեց 291 ձայնով ընդդէմ 42-ի:

—

Լօնդոն.—Պալատի անդամ Պալմերը դիմեց Գրէյին հարց տալով ռուս-եաՊրէյը գրաւոր հետևեալ պատասխանը յղեց. «Ես հիմք չունեմ ենթադրելու, թէ կապվել է կամ նկատի է եղել որևէ այնպիսի համաձայնութիւն, որպիսին սպառնայ խախտելու բաց դռների սկզբունքը բրիտանական առևտրի համար»:

—

Տոկիո.—Բիւլլետէնները վկայում են, որ կայսրի առողջութիւնը դէպի լաւն է գնում. տաքութիւնը իջաւ, գիտակցութիւնը ժամանակ առ ժամանակ յետ է գալիս:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յուլիսի

Կ. Պոլիս.—Դամադ-Շերիֆ փաշան նշանակվեց հասարակական աշխատանքների մինիստր, իսկ Բէշիդ փաշան՝ երկրագործութեան:

Մինիստրների խորհուրդը որոշեց Ալբանիա ուղարկել մի մասնաժողով սենատոր Բէշիդ-Ակիֆ-փաշայի նախագահութեամբ՝ տեղում ալբանական պահանջները քննելու համար:

Լուրերի համաձայն, յուլիսի 10 ին վերացվելու են պաշարողական դրութիւնը և զինուորական դատարանը:

Պօստերի մինիստր նշանակվեց Սաբա-փաշան, որ եգիպտացի է:

Մինիստրների խորհրդում քննվում է ընդհանուր ամնիստիա տալու հարցը:

Բոլոր լրագիրները, բացի «Թանինից», ողջունում են նոր կաբինէտի կազմը:

Կ. Պոլսի կոմենդանտը փոխվեց. նրա տեղ նշանակվեց Սավֆէթ-բէյը:

—

Պրիզրէն.—Բ. Դուռը հրաման ուղարկեց զօրքերին՝ արգելք չը լինել առնաուտներին գնալ Կոսսովայի դաշտը, ուր գնում է սենատի մասնաժողովը՝ առնաուտների հարցը կարգաւորելու համար:

Պրիզրէնից այնտեղ են գնացել 1000 մարդ:

—

Պրիշտինա.—Կոսսովայի դաշտը եկան 10 000-ից աւելի զինված ալբան իրանց պարագլուխների հետ: Պրիշտինայում և շրջակայքում գտնվող զօրքերը եղբայրանում են եկողների հետ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յուլիսի

Թաւրիզ.—Փոխ-գնդապետ Բաղչէնկօյի զօրախումբը աջողութեամբ միացաւ Ահարում գնդապետ Տօլմաչեվի զօրամասի հետ:

Արդաբիլից հաղորդում են, որ գեներալ Ֆիդարօվը բանակ է դրել Կոնսուլքենդում:

Պարսից զօրամասը ընդհարում ունեցաւ շահսէվանների հետ, որոնք նահանջեցին լեռները:

—

(Լրագիրներից)

Բագում Պարսկաստանից տեղեկութիւններ են ստացվում, որ շահսէվան աւազակաբարոյ ցեղը շարունակում է իր ապատակութիւնները և յարձակումները

ռուսաց զօրքերի վրա, որոնք աջողութեամբ վանում են յիշեալ յարձակումները։ Գենեռալ Ֆիդարովի զօրամասը բարձրացել է լեռները։

—

Կովկասի Փոխարքան կարգադրել է շահսէվան ցեղերի դէմ կռուող ռուսաց զօրքերին՝ համարել այդ ցեղերին աւազակների խմբակցութիւն և վարվել նրանց հետ իբրև աւազակների։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր նախորդ յօդուածներից մէկում շեշտել էինք տեղական և մասնաւորապէս հայ հասարակութեան անտարբերութիւնը դէպի Պետական Դումայի անդամների ընտրութիւնը։

Գուցէ այդ երևոյթն իր արդարացնող պատճառներն ունի, ինչպէս օրինակ այն բանը, որ այդ հաստատութիւնը մեզ անդրկովկասցիներիս դեռ ևս չէ տուել մի շօշափելի արդիւնք՝ զեմստվո, երդուեալների դատարան, համալսարան, խնդանների և մի շարք ուրիշ կենսական խնդիրների լուծումն, որոնցով մենք յետ ենք մնացել Ռուսաստանի նահանգներից։

Ի հարկէ, եթէ այս յիշած խնդիրներից գոնէ մէկը կամ միւսը իրականացած լիներ մեզանում Պետական Դումայի շնորհիւ, այն ժամանակ, պարզ է, ամենից համար շօշափելի կերպով կերևային այս նոր կառավարչական հաստատութեան բարիքները։

Բայց և այնպէս սա փաստ և իրողութիւն է, որ այսուհետև մեր երկրի բոլոր բարիքները և ապաւէնները պիտի տրվեն Պետական Դումայի անմիջական վճռով և բարեացակամութեամբ, ապա ուրեմն մեզ ամենից համար շատ կարևոր նշանակութիւն ունի, թէ ովքեր են լինելու այդ օրէնդիրը ատեանում՝ Պետական Դումայում։

Նախ և առաջ մենք ամենքս, որոնք իրաւունք ունենք ընտրելու, պէտք է յիշենք, որ մեր քուէն ունի մեծ նշանակութիւն ընտրութիւնների ժամանակ։ Իւրաքանչիւրը քուէ կարող է ընտրութեան վիճակը որոշել այս կամ այն կողմը, յօգուտ ցանկալի կամ ոչ-ցանկալի պատգամաւորի։ Իսկ մի ցանկալի կամ ոչ-ցանկալի պատգամաւոր Դումայում կարող է խնդրի լուծումը ծռել մէկ կամ միւս կողմը։ Սրանով ուզում ենք ցոյց տալ, թէ որքան մեծ նշանակութիւն ունի մեր իւրաքանչիւրիս մասնակցութիւնը։

Պէտք է ուրեմն աշխատել, որ բոլոր իրաւունք ունեցողները ընտրութեան մասնակցելու՝ անպատճառ մասնակցեն։ այս արդէն ինքն ըստ ինքեան մեծ բան է երկրի առաջադիմութեան համար, երբ իւրաքանչիւրը քաղաքացի օգտվում է իր իրաւունքից։

Մենք ուրեմն մեր նշանաբանը կը դնենք՝ որքան կարելի է մեծ քանակութեամբ ընտրողներ գրաւել դէպի քուէտուփ։

Նախ և առաջ ընտրողները պէտք է ուշադիր լինեն, որ իրանց ազգանունները մուծված լինեն ընտրողական ցուցակների մէջ։ շատ յաճախ պատահում է, որ սխալմամբ կամ մոռացութեամբ այդպիսիք չեն նշանակվում։ ապա ուրեմն պէտք է օրինական ժամանակամիջոցում յայտնել, ուր հարկն է, որ մոռացված ազգանունները մացվեն ցուցակների մէջ։ Այնուհետև չեն մացնում անունները ցուցակների մէջ, եթէ բնակարանային կամ տնային, կառավարչական տուրքերը չեն լինում վճարված։ ի հարկէ, պէտք է շտապել և ժամանակին վճարել, որպէսզի չը զրկվենք մեր թանգագին իրաւունքներից։ տուրքը, միևնոյն է, այժմ թէ քիչ յետոյ պէտք է վճարել, այն էլ տոկոսներ աւելացրած։ աւելի լաւ չէ հիմա վճարել և իրաւունքները ձեռից չը թողնել։

Չը պէտք է մոռանալ, որ Պետական Դումայի անդամներ ընտրելու բաւականութիւնը մեզ տրվում է հինգ տարին մի անգամ։ ուրեմն մենք ապիթից պէտք է այժմ օգտվենք, թէ չէ շուտով այդ բանը չի կրկնվի։

Ազգաբնակութեանը և ընտրողներին պէտք է ծանօթացնել լրագրական յօդուածներով, դասախօսութիւններով կառավարչական մեր նոր սիստէմայի հետ, ուր ժողովուրդը մեծ իրաւունքներ ունի ի դէմս ժողովրդից ընտրված Պետական Դումայի և անդամների կիսով չափ ընտրված Պետական Խորհրդի։

Այժմ, երբ ուսուցիչները ազատ են, երբ շատ ինտելիգենտ ոյժեր ամառվայ ընթացքում ցրված են զաւառական քաղաքներ, նպատակայարմար կը լինէր, եթէ դասախօսութիւններ կազմէին այդպիսիք և ժողովրդին ծանօթացնէին մեր նոր օրէնսդրական մեխանիզմի, նրանց իրաւունքների ուղղութեանութիւնների և վերջապէս ընտրութեան հետ։

Զարմանալի լաւ կը լինէր, եթէ Հրատարակչութիւնը յանձն առնէր թարգմանելու և տպելու Հիմնական Օրէնքները և Պետական Դումայի կազմակերպութեան, ընտրութեան և իրաւասութեան վերաբերեալ օրէնքները և այդպիսին ցրվէր ժողովրդական լայն խաւերի մէջ։

Մօտենում պահանջները սրանք են։

Շիրին

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Դումայի նախընտրական տրամադրութիւնների տուիթով «Стол. Молва» լրագրի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել սահմանադիր-ռամկավարների ֆրակցիայի քարտուղար Ա. Մ. Կոլիւբակինի հետ։

«Նախ և առաջ,—ասել է Կոլիւբակինը,—սա վերջերս տարբեր տարատեսակ կուսակցութեան մասին տարածված այն լուրերը, թէ իբր նրանցում ճնշված տրամադրութիւն է տիրում հրէաների վերաբերմամբ սենատի տուած վերջին մեկնութեան պատճառով։ Նրանց ընտրողական իրաւունքներից զրկելը չի ներգործի մեր թեկնածուների վրա ոչ Պետերբուրգում և ոչ էլ Մոսկվայում։

«Ընտրողական պայքարը մենք մտադիր ենք սկսել ընտրութիւնների ժամանակը յայտարարվելուց յետոյ։ Կը փորձենք մի քանի ժողովներ գումարել մարտի 4-ի օրէնքի համաձայն։

«Պետերբուրգի առաջին կուրիայում սահմանադիր-ռամկավարները հանդէս կը գան ընտրութիւններին առաջադիմականների հետ բլոկ կազմած։ Երկրորդ կուրիայում առաջարկվելու են նախկին թեկնածուները՝ Բոգդիչեվ, Միլիւկով և Կուլերը։ Այս երկրորդ կուրիայում սահմ.-ռամկավարները կը գործեն բոլորովին անկախ կերպով։

«Մոսկվայում կառաջարկվեն Մակլակովն ու Շչեպկինը։ Տեսլենկոն հրաժարվել է քուէարկվելուց։ Օդեսայում սահմ.-ռամկավարները կը պաշտպանեն հրէաների թեկնածու երդ.-հաւատարմատար Սլիոզբերգին, երկրորդ կուրիայում՝ Պետական Դումայի անդամ՝ Նիկոլսկիին»։

Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ

—

Թիֆլիսի մամլաճառներից շատերը թէ ինչպիսի միջոցներով հարուներ ու հաղարներ են կորզում խեղճ գիւղացի չօղարներից, զրան կարող է ծառայել որպէս

*) Տես «Մշակ» № 149.

վաստ միայն վերջին օրերս սպանդանոցում տեղի ունեցած մարդասպանութիւնը։

Չօղարներից մէկը ծախել է Կոլա անունով մի մսավաճառի 4000 ր. անասուններ։ Այս մարդը գնում-գալիս, վերջապէս աղաչում-պաղատում է, որ այդ խոշոր գումարի մի ինչին մասը գոնէ տայ, բայց մսավաճառը այնքան անխիղճ է գտնվում, որ մի կոպէկ անգամ չէ վճարում ասելով՝

— Զուռնեմ, ոչինչ չունեմ, ի՞նչ տամ։ Կուզես՝ գնա գանգատ արա, և եթէ բան կը գտնես՝ վեր գրի, ծախիր ու տանցիր։

Խեղճ չօղարը շատ լաւ գիտէ, որ գանգատով ոչինչ չէ կարող տանել, որովհետև նրա կարողութեան մի մասը ուրիշի վրա է հաստատված, մի մասն էլ մի քանի իր պէս չօղարներից և ուրիշներից վեր գրված ու այնպէս էլ մնացած է...։

Այո, մեր մսավաճառները շատ լաւ են հասկանում ռուսի կանօնը. պատենան էլ թանգ չէ, այսօր մէկի անունով է առնված, միւս օրն էլ մի ուրիշի անունով կը լինի։ Բաւական է, որ մի խամ գիւղացի իրանց ծուղակը զցէն և կարողանան մի քանի ռուբլի կանխավճար տալով՝ անասունները ձեռքից վերցնել, այնպիսի օյիններ կը խաղան խեղճ ու միամիտ գիւղացու գլխին, այնքան դաշտաքանդերում քարշ կը տան, որ ի վերջոյ կամ բոլորովին ձեռք վերցնել կը տան իր ստանալիքներից, կամ 1000 ռուբլուն 100—200 ռուբլով կը յօժարեցնեն և գլխիկոր կը ճամբեն իր գիւղը։ Մի փոքրիկ մաս վճարելը դարձեալ լաւ է, ինչպէս նուենի, սակայն յիշեալ Կոլան 4000 ռուբլում 4000 կոպ. էլ չէ կամեցել տալ։ Մարդը միշտ աղաչելիս է եղել. «Ի սէր Աստուծոյ, ի սէր Քրիստոսի տուր, ինչքան կուզես տուր, մի մանի երեխանելիս մեզքի տակ. այդ մալը իմս չէ, զրանց տէրերը կը գան և տունս-տեղս, ամեն ինչս վեր կը գրեն, կը ծախեն. և ինձ ընտանիքովս բոլորովին մոխրի վրա կը նստեցնեն»։ Երբ որ, վերջապէս, իր այդպիսի խօսքերը առ ոչինչ են անցկենում և համբերութեան բաժակը լցվելով յուսահատութեան է հասնում, հանում է դաշոյնը և, թէ այդ մսավաճառ Կոլային և թէ մէկ ուրիշին տեղն ու տեղը սպանում և ինքն էլ գնում կառավարութեանը յանձնվում։

Ինչպէս պատմում են, սպանդանոցի բակում եղել է և այսպիսի դէպք էլ, որ մսավաճառը կամ նրա ծառայողը գնել է եզներ, մորթել է տուել, իսկ ինքը այնպէս է ծլկվել ու անյայտացել է խեղճ գիւղացու աչքերից, որ մարդը մնացել է ապշած ու բերանը բաց։ Սոյնանման դէպքեր շատ յաճախ են կրկնվում քաղ. սպանդանոցում, և Թիֆլիսի անխիղճ (բացառութիւնները յարգելի են) մսավաճառներն ու իրանց արբանեակները շատ գիւղացիների են լացեցրել ու լացեցնում, սակայն քաղ. վարչութիւնը կարծես բոլորովին անտեղեակ այդ ամենին՝ չէ կարողանում մի որևիցէ կարգադրութիւն անել։

Արդեօք ժամանակ չէ՞ այդ վայրագ և գժբաղդ դէպքերի առաջն առնելու։

Սրմ. Գափ.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՕՆԻԶՄԸ *)

(Սոցիալական խոհեր մի բանակալի առիթով)

III

Բայց լուռ չը նստեց Հեկկելը՝ գերմանական դարվինիզմի այդ արժանաւոր հայրը, որի խիզախ քայլը իր ծերութեան վերջին օրերին, երբ նա դուրս եկաւ իր ընտանիքով եկեղեցու ծոցից, սքանչացրեց գնահատել գիտցողներին։

Կասկած չը կայ, որ Հեկկելը չէ իշնում Բերլինի աստուածաբանի վիճաբանական եղանակի ցած ու անպատկառ մակարդակի վրա։ Նա թաւում մի քանի պերճախօս հայհոյական նմուշներ ի տես և ի միտ ընթերցողի, sapienti sat... Ապա յիշում է իր այն նշանաւոր երկերը, ուր նորագոյն բնագիտական աշխարհահայեացքի հիմերն են տարրալուծված։ «Ծանրանալ նրա (այսինքն Հարնակի) դուալիստական, սպեցիֆիկ-աւետարանական աշխարհահայեացքի հիմնական սխալների վրա՝ թաւում է աւելորդ, նրա այնքան մակերեսային լինելու պատճառով», ասում է Հեկկելը։ Սա ապշում է ուղղակի, թէ ինչպէս գիտնականութեան այնքան մեծ հռչակ վայելող մարդը «փիլիսոփայական կրթութեան այն աստիճան աչքի զարնող թերութիւն և արդէն ապացուցված իրողութիւնների անծանօթութիւն է» մատնում հրապարակով, իր «Գաբուչինի քարոզի», «անհամ ճառի» մէջ։

«Ցիսուն տարուց ի վեր,—գրում է պրոֆ. Է. Հեկկելը,—մինչոյն զարգացման ուսմունքը ամենածանր կռիւների մէջ ենթարկեց իրան մարդկային գիտութեան բովանդակ սահմանը և վերջնականապէս ջախջախեց գերբնական ստեղծագործութեան նախապաշարալից բանաստեղծումը»։ «Վերջին քսան տարվայ ընթացքում նուաճել է այդ բնական, նախապաշարմունքների ճիրաններից աղատագրված աշխարհահայեացքը (մօնիզմը) լայն շրջաններ՝ բնագիտականօրէն կրթվածների մէջ, հակառակ այն բոլոր խոչընդոտների, որոնցով ուժեղ, «սրբազործված տրադիցիան»՝ յենված «գահ ու խորանի» ոյժի վրա՝ նրա ճանապարհը խաւփանել էին ձգտում»։

Հարնակը, քսաներորդ դարի «աղատամիտ» աստուածաբանութեան գլուխը, առանց վարանման յայտարարում է, որ «մօնիստական դարը սկսվել է այն ժամանակ, երբ Մովսէսը գրել է. սկզբում ստեղծել է Աստուած երկինքը և երկիրը»։ Սա արդէն մի հակայական ծաղր է, մտահայեացքի մի անսովոր սկանդալ ժամանակակից բնագիտութեան բոլոր ճիւղերի տարբերական ճշմարտութիւնների դէմ։ Ի՞նչ կարող է անել պաղեստինական քաղքենու այդ խղճուկ մտաւոր ապուրով բաւականացող պայծառափայլ աստուածաբանի հանդէպ՝ ապացուցված փաստերի ու իրողութիւնների ծանր արտիլերիայով զրահաւորված բնագէտը։ Կարող է այստեղ լուրջ պոլեմիկայի, հիմնաւորված արդուժնտացիայի մասին որևէ խօսք լինել, երբ հերետիկական մի խոշոր մայրաքաղաքի պրոֆէսոր ձեր հանդէպ կրկնում է պարզապէս՝ իբրև իր դոգմատիկ աշխարհահայեացքի հիմք՝ այն խօսքերը, ինչ դուք Ապարանի և Ղարաբաղի ամեն մի գեհենիկ տիրացուից կը լսէք օրն ի բուն։

«Ուղղակի մանկական բարբառ»՝ այս խօսքերով է ընդարձում Հեկկելը պայծառափայլ աստուածաբանի «աստուածաշնչային ֆանատիզմը» (դարձեալ Հեկկելի բնորոշումը)։

Հեկկելը մի ընդարձակ հանգամանքի առիթով ևս իրաւացիօրէն արտայայտում է իր ապշանքը։ Երևակայեցէք, երկու տարի առաջ հիմնված «Կայսր-Վիլհելմ Ինկերութեան» նախագահ նշանակվել է կայսրից պրոֆ. Հարնակը. իսկ այդ ընկերութեան «գլխաւոր նպատակն է անկախ բնագիտական հետազօտութիւնների ինստիտուտներ կազմակերպել»։ Այդ փաստը «ուշադրութեան արժանի» մի հանգամանք է համարում Հեկկելը և աւելացնում. «Ի դէպ մենք ընտելացել ենք արդէն 24 տարվայ ընթացքում նման զարմանալի անակնկալների»։ Դրանով մատնանշում է նա անկասկած Վիլհելմ կայսրի կառավարական շրջանի նման շատ կուրիոզների վրա։

Իրաւ, առաջին հայացքից մարդ չէ գտնում զոհացուցիչ բացատրութեան ոչ մի կան շէնք, վարձովի է, լուսաւոր և յարմար։ Ունի գրադարան 138 կտոր հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում թերթ։

Սարուշէն.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 65 սովորողներով, որոնցից 41-ը տղաներ են, 24-ը աղջիկ։ Դպրոցն ունի երկու դասատու՝ 1) օր. Համեստ Մաղաթեան, որը աւարտել է Շուշու ռուս. օր. Մարիամեանը, այստեղ առաջին տարին է, ստանում է 350 ր. ռոճիկ և բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ 2) Յովսէփ քահանայ Մելիք-Հայկազեան, աւարտել է Շուշու թեմականի 4-րդը, ստանում է 100 ր. ռոճիկ։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից (90 ր.) և պ. Ց. Այվազեանի նպաստից (300 ր.)։ Դպրոցն ունի մի երկյարկանի դպրոցական շէնք, որ կառուցել է պ. Այվազեանը, բաղկացած 7 սենեակից, ունի գրադարան, 76 հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում ոչ մի թերթ։

Ներքին Թաղավարդ.—Դպրոցը միդասեան երկսեռ է, ունի երեք բաժանմունք 59 սովորողներով, որոնցից 56-ը տղաներ են, իսկ 3-ը աղջիկ. դասատուն է պ. Աւետիս Գասպարեանը, որը աւարտել ի Շուշու թեմականի 5-րդը, այստեղ երրորդ տարին է, ստանում է 500 ռուբլի ռոճիկ, բնակարան, ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից (300 ռուբ.)։ Դպրոցն ունի սեփական երկյարկանի շէնք, բաղկացած 3 սենեակից, ունի գրադարան 300 կտոր հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում և թերթ։

Աւետարանոց.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 35 սովորողներով, որոնցից 34-ը տղաներ են, իսկ 1-ը աղջիկ։ Դասատուն է տ. Հռիփսիմէ Բաղդասարեանը, որը աւարտել է Թիֆլիսի Յովհաննան դպրոցը։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից։ Դպրոցն ունի սեփական շէնք, բաղկացած երեք սենեակից. չունի գրադարան, չէ ստանում և թերթ։

Դրնավարզ.—Դպրոցն ունի երկու բաժանմունք 65 սովորողներով, որոնցից 33-ը տղաներ են, իսկ 32-ը աղջիկ։ Դասատուն է պ. Միքայէլ Տէր-Յովհաննիսեանը, որը աւարտել է Շուշու թեմականի IV-ը, ստանում է 450 ր. ռոճիկ և բնակարան, ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից (3 ր. 50 կ.), ծխական տուրքից (170 ր.) և Կ. Միութեան նպաստից (180 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է, չունի գրադարան, ստանում է մի հայերէն թերթ։

Թաղլար.—Դպրոցն ունի չորս բաժանմունք 118 սովորողներով, որոնցից 107-ը տղաներ են, իսկ 11-ը աղջիկ։ Դպրոցն ունի 2 դասատուն. 1) աւագ-ուսուցիչ պ. Յակոբ Խաչարեան, աւարտել է Շուշու թեմականը, այստեղ երկրորդ տարին է, ստանում է 550 ր. ռոճիկ. 2) պ. Ալէքսանդր Մելքումեան, աւարտել է Շուշու քաղաքային դպրոցը, ուսուցչութեան առաջին տարին է, ստանում է 450 ր. ռոճիկ։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից և Կ. Միութեան նպաստից։ Դպրոցն ունի սեփական շէնք, որը խիստ անյարմար է, միայարկ, մութ և խարխուլ, չունի գրադարան, չէ ստանում և թերթ։

Ծովատեղ.—Միդասեան երկսեռ, ունի երեք բաժանմունք 31 սովորողներով, որոնցից 22-ը տղաներ են, իսկ 9-ը աղջիկ։ Դասատուն է պ. Բագրատ Յովհաննիսեանը, որը ունի Շուշու թեմականի 5-րդ դասարանի վկայական, ստանում է 420 ր. ռոճիկ, այստեղ երկրորդ տարին է։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից (100 ր.) և Կուլտ. Միութեան նպաստից (180 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է (40 ր. տարեկան), ունի յարմարութիւններ. չունի գրադարան, չէ ստանում և թերթ։

Քերթ.—Միդասեան երկսեռ, ունի երեք բաժանմունք 20 սովորողներով, որոնցից 18-ը տղաներ են, 2-ը աղջիկ։ Ուսուցիչն է պ. Աշոտ Բայանդրեանը, որ աւարտել է Շուշու թեմականը, այստեղ երկրորդ տարին է, ստանում է 200 ր. ռոճիկ և բնակարան, ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են ծխական տուրքից (200 ր.), բարերար պ. Ց. Խունոնցի նըպաստից (200 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է և զուրկ ամեն մի յարմարութիւնից։ Դպրոցը չունի գրադարան, չէ ստանում ոչ մի թերթ։

Սիստորաշէն.—Ունի երկու բաժանմունք 32 սովորողներով, որոնցից 28-ը տղաներ են, իսկ 4-ը աղջիկ. դասատուն է պ. Գրիգոր Ղազարեանը, որ աւարտել է Շուշու թեմականը, այստեղ երկրորդ տարին է, ստանում է 350 ր. ռոճիկ և բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից (200 ր.) և պ. Ց. Խունոնցի նպաստից (100 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է, լուսաւոր և յարմար։ Ունի գրադարան 138 կտոր հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում թերթ։

Ծոր.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 44 սովորողներով, որոնցից 27-ը տղաներ են, իսկ 17-ը աղջիկ։ Դասատուն է տ. Հռիփսիմէ Բաղդասարեանը, որը աւարտել է Թիֆլիսի Յովհաննան դպրոցը։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից (200 ր.), պատահական նուէրից (20 ր.), մետաքսի գործարանից (50 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է և անյարմար դասատուութեան համար, ունի գրադարան 500 կտոր հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում և թերթ։

Մոխրինէս.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 26 սովորողներով, որոնցից 22-ը տղաներ են, իսկ 4-ը աղջիկ. դասատուն է Յովսէփ քահ. Սարգսեանը, որը աւարտել է Շուշու թեմականի IV-ը, ստանում է տարեկան 370 ր. ռոճիկ։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից (70 ր.). դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է, միանգամայն անպէտք դասատուն ծառայելու համար, զուրկ է գրադարանից, չէ ստանում ոչ մի թերթ։

Հաղրոմ.—Դպրոցն ունի չորս բաժանմունք 186 սովորողներով, որոնցից 62-ը տղաներ են, իսկ 124-ը աղջիկ։ Դպրոցն ունի 4 դասատու, 1) աւագ-ուսուցիչ պ. Սուրէն Նաղարեան, աւարտել է Ներսիսեան դպրոցը, այստեղ առաջին տարին է, ստանում է 630 ր. ռոճիկ. 2) տիկ. Վ. Նաղարեան, աւարտել է Ալէքսանդրոպոլի պրոգիմնազիան, այստեղ առաջին տարին է,

խօսք, թէ ինչպէս բնագիտական նպատակների հետևող մի ընկերութեան գլխին կանգնել կարող է և կանգնելու իրաւունք է ստանում մի մարդ, որ բացարձակապէս ոչ մի առնչութիւն չունի՝ ոչ ի պաշտօնէ և ոչ իբրև սոսկ անհատ, բնագիտութեան հետ։ Թող լինէր գոնէ մի չափաւոր, հակադարվինիստ բնագէտ, բայց նախագահ նըշանակել այնպիսի մի ընկերութեան՝ durch und durch հակաբնագիտական սկզբունքով (իր պարունակութեամբ) ունեցող, ի պաշտօնէ աստուածաբան մարդու,—սա նոյնիսկ աւելի քան ապշելի է։

Սակայն, մի միապետ կամ աստուածաբան պրոֆէսորի նման վարմունքներ եղակի և իրանք իրանց կղզիացած դէպքեր չեն, այլ օրգանական օրէնքներ մի ընդհանուր հասարակական երևոյթի, որի հիմքերը խորն են և էապէս սկզբունքային։ Թէ շօշափած թեմայի շահագրգռականութիւնը և թէ բուն խնդրի տրամաբանական թեզի լրացման պահանջը ստիպում են ինձ դէթ ընդհանուր գծերով ծանրանալ երկու հակամարտ աշխարհահայեացքների հասարակական արտացոլումների վրա, որպէսզի անթերի ըմբռնել կարողանաք յիշածս երևոյթի ծագման աղբիւրը և զարգացման կոնկրէտ պայմանները։

B. Intimus

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Կեանքը Կօջօր ամարանոցում

Կօջօր ամարանոց, 8 յուլիսի

Աւելորդ չէր լինի յայտնել, որ այս տարի, զգալի չափով ամարողների բացակայութեան պատճառով, տեղումս այն կենդանութիւնը չէ տիրում, ինչ լինում էր առաջ, երբ բոլոր սենեակները և տները վարձված էին լինում, երբ տրվում էին ներկայացումներ և համերգներ, երբ երթևեկում էին զուարճաբեր մարդիկ կառքերով. միով բանիւ այս անգամ անհամեմատ տխուր է կեանքը։ Թէ ինչու, անյայտ է։

Լսում ենք, որ այս սեզօնին վերջանում է տեղիս հայոց եկեղեցու երէցփոխ կոյս Թամիրեանի երէցփոխութեան ժամանակամիջոցը։ Անշուշտ յայտնի կը լինի տեղիս հայ հասարակութեանը կոյսի արդիւնաւոր գործունէութեան և եկեղեցուն տուած օգուտների մասին։

Չը նայած, որ կոյսի մնալը նոյն պաշտօնում անտարակոյս և ապագայում կունենար իր արդիւնքները, սակայն, լուրերին նայած, նա վճռականապէս հեռանում է պաշտօնից՝ ծանրաբեռնված լինելով կուսանաց վանքի մայրապետական և այլ պաշտամանատու գործերով։ Բ. Բերլինեան

—

Կաթ. օծման հանդէսը գիւղացու համար

Վաղարշապատ, 5 յուլիսի

Ո՞վ ապրել է գիւղում, ով փոքր ինչ ծանօթ է գիւղացու կեանքին, ով տեսել է նրան ամառվայ ամիսներում արեգակի այրող ճառագայթների տակ, ոտից գլուխ քրտնքի մէջ կորած՝ կալում եղանը ձեռքին, դաշտում բահը ուսին իր և իր անասունների ճմռան պարէնը աշխատելիս, նա շատ լաւ կը հասկանայ, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի գիւղացու համար նրա մի օրվայ—չեմ հաշուում շաբաթներն—աշխատանքից զրկվելը։ Բայց կրօնական զգացմունքներն ու ուխտագնացութիւնը մոռացնել են տալիս ամեն բան. այսպիսիները սիրով թողնում են իրանց գործը ու գնում են ուխտ։ Այսպէս էր ամիսս 1-ին Վաղարշապատում։ 5—7000 ժողովուրդը թողած իրանց կալն ու կոտը, այգու և հանդի գործերը, ահագին տարածութիւն կարելով եկել էր Էջմիածին՝ որը սայլով, որը ֆուրգօնով, որը ձիով՝ ուխտագնացութիւն

*) Տես «Մշակ» № 149.

կատարելու և կաթողիկոսական օծումը տեսնելու համար։ Եւ տեսնելով այդ՝ ուրախ սրտով, պայծառ դէմքով վերադառնում էին իրանց տեղը, տանելով իրանց հետ քաղցր հրանց տեղը, տանելով իրանց հետ քաղցր հրապաւորութիւններ և անմոռանալի յիշողութիւններ, որոնք թողել էին Էջմիածինը և այդ օրվայ վեհ տեսարանը, պատմելու իրանց դրացիներին, մերձաւորներին ու սիրելիներին։ Եւ մէկը պէտք է լիներ ու սիրելիներին։ Եւ մէկը պէտք է լիներ, որ այդ ահագին բազմութեանը յուլիսեան կիզիչ արեգակին մի որևէ զովացուցիչ ըմպելիներով զովացներ։ Եւ ահա այդ մէկը եղաւ կ. Հ. Բ. Ը. տեղիս ճիւղի վարչութիւնը։ Վարչութիւնը նկատի ունենալով իր անելիք դերը—հակառակ տեղիս ճիւղի սուղ դրութեան—լճի ափին բուֆէտ էր բացարել և ծախում էր Ընկերութեան օգտին սառը լիմոնադ, հանքային զանազան ջրեր, պաղպաղակ և թէյ։ Ինչպէս իմացանք, ծախվել է 300—350 բուրլու։

Ինչպէս իմացանք, այսօր Վեհափառ Հայրապետը այն եպիսկոպոսներին, որոնք թողել էին իրանց թեմը և տեղը ու եկել օծման համար, նրանց հրաւիրել էր վեհարան ճաշի։

Այս առիթով Երևանի թեմի փոխ առաջնորդ Խորէն եպիսկոպոսը այսօր եկաւ Երևանից։

Շուտով բոլորն էլ վերադառնալու են իրանց տեղերը և թեմերը։

Խօսվում է, որ Վեհափառը ամսի 11-ին գնալու է Բիւրական ամարանոց։

Վ. ք. Աղաջանեան

—

Հացահատիկի բերքը Խաչէնում

Վանք (Խաչէնի գաւ.), 5 յուլիսի

Այս տարի գաւառիս սար գիւղերի արտերը ազատվել են կարկուտից կամ սաստիկ ցրտերից, չը նայած որ ապրիլի 12-ին եկած վերջին ձիւնը չորացրեց բոլոր պըտղատու ծառերի ծաղիկները։

Այս տարի շատ աջող անցաւ գիւղացիների համար. առատ բերք տուեցին ցորենի և գարու արտերը, միևնոյն ատասվում է կորեկի բերքին։

Այստեղ շուտով հունձը կը վերջանայ։

Մինչև յունիսի 25-ը այստեղ ցորենը ծախվելիս է եղել 2 ր. կամ 2 ր. 10 կ., իսկ այժմ ծախվում է 1 ր., յոյս կայ որ էլ էժան ծախվի։ Խ. Զլինգարեան

—

Տրաւոից նեղվող մի օրացոյց

Շաղաթ գիւղ (Սիսիան), 22 յունիսի

Որքան գարնան մարտ և ապրիլ ամիսներում ձիւնը և անձրևը փչացրին ցանքը, այժմ պակասը լրացնում է երաշտը։ Մի չը տեսնված երաշտ է այս տարի Սիսիանում։ Ուղիղ երկու ամիս է, ինչ անձրև չէ գալիս. երկիրը չորացել ու ճաքճքվել է, ցանքը դեղնել ու աղանձվել է, սարերը չորացել են երաշտից, արածելու խոտ չը կայ. անասունները երեկոները սուած փոքրով են վերադառնում հանդերից։ Նոյն իսկ ծերունիները չեն յիշում այսպիսի երկար երաշտ։

Թէպէտ խոտհարը սկսվել է, բայց խոտը սակաւ է ու թանգ։ Եթէ այդպէս շարունակվի, ձմրան համար մեծ սով է սպառնում։

Այդ դառն վիճակը դեռ բաւական չէը, գիւղացուն մի պատուհաս էլ է աւելացել, եղջիւրաւոր անասունների մէջ տարածված է դաքաղ հիւանդութիւնը։ Սիսիանում չը կայ մի գիւղ, ուր այդ ախտով վարակված չը լինեն անասունները։ Սակայն հիւանդութեան դէմ ոչ մի միջոց ձեռք առնող չը կայ. շուարած գիւղացիք—թէ հայ և թէ թուրք—իրանց մնոտիապաշտութեամբ դիմում են սուրբերին ու մատաղներ անում, բայց դարձեալ անձրև չէ գալիս, իսկ դաքաղը օրէ-օր սաստկանում է։

Սիսիանում ժողովուրդը պարապում է միայն երկրագործութեամբ ու անասնապահութեամբ։

Երկրագործական ու գիւղատնտեսական կատարելագործված գործիքներ ու մեքենաներ դեռ մուտք չեն գործել մեզանում, բացի Բազարչայ կոչվող մօլական գիւղից, որի ընակիչներն ունեն ազնուացեղ անասուններ ու ձիեր, երկրագործական կատարելագործված գութաններ ու գործիքներ և գիւղատնտեսական մեքենաներ։ Միմիայն սերգատ մեքենաների թիւը 6 հատ է գիւղում։ Գ. Ցարուքիւնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Վերադարձաւ Էջմիածնից, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման հանդէսին ներկայ գտնվելուց յետոյ, Թիֆլիսի հայոց թեմի կառավարիչ Եփրեմ եպ. Սուքիասեանը։

✦ Թիֆլիսի Նահանգապետը Կովկասի Փոխարքայի առաջ միջնորդութիւն է յարուցել ընդմիշտ վերացնելու ծառայողների նորմալ հանգստեանը վերաբերող պարտադիր կանոնների 5-րդ, 6-րդ և 16-րդ յօդուածները, որոնք շատ են նեղում ազգաբնակութեանը անհրաժեշտ կենսական մթերքների վաճառման գործում։

✦ Թիֆլիսում խալերայի վտանգի առիթով կարգադրված է. քաղաքում գործող բոլոր բժիշկները առանձին թերթիկներով պարտաւոր են բժշկա-սանիտարական տեսչին տեղեկացնել ստամոքսա-աղիքների հիւանդութիւններ ունեցողների մասին. քաղաքային ջրանցքի ջուրը ենթարկվելու է պարբերաբար բակտերիոլոգիական քննութեան. հատատվել է յատուկ մանաժողով սանիտարական տեսչի և ցանկացող ձայնաւորների մասնակցութեամբ ակումբները, խողոր առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնները, բուֆէտները նայելու համար։ Վճռված է դիմել Թիֆլիսի գաւառապետին խնդրելով այժմ եթէ պահակներ դնել Աւճայում, որպէսզի տեղացի բնակիչները չը կեղտոտեն Կուր գետի ափը, որտեղից զանազան կեղտոտութիւններ կարող են ընկնել ջրանցքի խողովակները։

✦ Այսօր լրանում է այն ժամանակամիջոցը, երբ կառավարական և հասարակական հիմնարկութիւնները յայտնելու էին քաղաքային վարչութեանը իրանց այն ծառայողների ցուցակները, որոնք իրաւունք ունեն մասնակցել 4-րդ Պետական Դումայի ընտրութիւններին։

✦ Բօրժոմից վերադարձաւ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ն. Բուդոլֆը։

✦ Թիֆլիսի խաղողի մշակութեան ու գինեգործութեան կոմիտէը 19,500 ր. նպաստ ստացաւ 1913 թ. իր գոյութիւնը շարունակելու համար։

✦ Այսօր վարժուհիների ընկերութիւնը կազմակերպում է գրական երեկոյ, նուիրված հանգուցեալ ռուս գրող Ալ. Չէխովի յիշատակին։

✦ Քաղաքային վարչութեան և տեխնիկական ու ժողովրդական առողջապահութեան մասնաժողովների միացեալ նիստում ընդունվեց քաղաքային ծննդաբերական ապաստարանի համար սեփական շէնք կառուցանելու նախագիծը։

✦ Վերադարձաւ Թիֆլիս Կովկասի անասնաբուժական մասի կառավարիչ Զօլոտարիէվը։

✦ Քաղաքային մասնաժողովը նահանգապետի հետ Նատախտար կը մեկնեն ջրերը դիտելու համար յուլիսի 28-ին։

✦ Մոսկվայի դասախօս Այխենվալդ Թիֆլիսի հասարակական ակումբի հրաւէրով այս աշնանը գալու է Թիֆլիս մի շարք դասախօսութիւններ կարդալու համար։

✦ Բազումի ուսուցիչ Ապրակսինի հետ տեղի ունեցած դէպքը քննվելու է զինուորական դատարանում։

✦ Բիբի-Էյբաթում, Միլեանի և Թայիրեանի հանքերում խփում է ֆօնտան։

✦ Բազումի դեռ ոչ մի արտակարգ միջոց խալերայի մուտքը խափանելու նպատակով ձեռք առնված չէ։ Իսկապէս այդ հանգամանքը սազում է անգլուխ քաղաքին։

✦ Բազումի հեռագիրը է ստացվել, որ փաստաբան Մակլակովը հրաժարվել է պաշտպանել միլիոնատէր դատապարտված Հ. Զ. Ա. Թաղիէվին սենատում։ Թաղիէվին պաշտպանելու համաձայնութիւն է յայտնել Թիֆլիսի նախկին նահանգապետ Բրկովը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

—

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Minas Tchéraz, „L'orient inédit", légendes et traditions arméniennes, grecques et turques. Paris, Ernest Leroux, 1912.

Մինաս Չերազ այս տիտղոսին տակ հաւաքած է իր շարք մը կարճ կամ ընդարձակ գրուածները, զորս ժամանակաւ ցրուած էր իր «Arménie»-ներուն մէջ։

«Անտիպ Արևելքը», ինչպէս որ հեղինակը կոչած է իր գրքոյկը, երկրորդ հատորն է, որ այս վերջին տարիներս լոյս կը տեսնէ ֆրանսերէն լեզուով, նկատմամբ հայ ազգագրութեան հէքիաթներուն։ Առաջին հատորը սիրելի ու համեստ Մաքլերինն է, «Հայ հէքիաթներ» («Contes arméniens»), զոր անցեալ տարի հրատարակեց, թարգմանելով մանաւանդ Սրուանձտեանի գրուածքներէն հէքիաթներ, որոնք ճշմարտապէս հայ են կամ հայացուած։ Մ. Չերազի հատորը անոր յաջողութիւնն ընելով՝ անոր զրոյցը չուներ։ Նախապէս ծրագրուած գործ մը չէ, ասոր համար ալ չունի յատուկ նկարագիր մը։ Հատորը կը բովանդակէ յունական և թիւրքական աւանդութիւններ ու առասպելներ, որ մեծ բան չեն. հայկականներն ալ յաճախ բուն հայկական չեն։ Ոչ ալ այն ատիճան ժողովրդական կամ այլափոխուած՝ մինչ կարելի ըլլայ իբր ժողովրդական մը գոլորը ներկայացնել, ինչպէս ուզած է հեղինակը։

Ամբողջին շեշտը տպաւորութիւնը կը թողու կեանքի վիճակի մը, ուր հեղինակը միշտ ստիպուած է բան մը գրելու, առանց գրելու բան մը ունենալու։ Ուստի ալ Մինաս Չերազ, այս գերազանց և բաղդաւոր կարողութեանց տէր մարդը, իր երկարատև պատաղումներուն ժամանակ Արևմուտք, ստիպուած ըլլալով ամեն անգամ բան մը գրելու իր «Arménie»-ին մէջ, յաճախ ուրիշ լաւ բան մը չէ գտած հասարակութեան տալու, քան այն գեղեցիկ բաները, զորս, արևելցի, իրեն մտքին մէջ ամբարած են Վոսկորի ձկնորսները, հողագործները, հովիները, մանաւանդ իմ մեծ մայրը, սիրելի ու դիւրահաւան՝ ինչպէս բոլոր մեծ մայրերը։

Մ. Չերազ այս բոլորը դուրս կուտայ, դիւրին ֆրանսերէնով մը, առանց մեթոդի և առանց անդրագոյն նուազագոյն աշխատութեանց։ Այսպէս՝ էջ 7—33, ուր կը խօսուի Սուրբ Գրոց և վկայաբանական անձնաւորութեանց վրայ, ինչպէս Ադամ, Եւա, Կայէն, Աբէլ, Նոյ, ս. Սարգիս, շատ լաւ կրնար նկատի առնել, իր գործին աւելի լրջութիւն մը տալու համար, Աստուածաշունչի անվաւերներու աւանդութիւնները, որոնց հետ մէկէջ աւելի աղերսներ ունին այս ժողովրդական առասպելները, և ցուցնել փոփոխակներու ասոիճանը՝ զորս կը ներկայացնեն այս բերանացի աւանդութիւնները։ Նոյն բանը կարելի է ընել նաև վկայաբանական աւանդութեանց նկատմամբ։ Էջ 33—64՝ արդէն պատմական մանրավէպեր և անցքեր են, որոնցմէ աւելին գիտէին թերևս քառորդ մը յառաջ ապրող մարդիկ այն անձանց նկատմամբ, զորս Մ. Չերազ իբր հետաքրքրութեան նիւթ կը հրամցնէ, այնքան նոր են այն անձինքը, ինչպէս Հալէթ էֆէնդին, Գազազ Արթին և այլն։

Գեղեցիկ են բուն հէքիաթները՝ «Պարող Թէզորը», «Պարոն ծոյը», «Զոքանչը» և այլն, բայց հակառակ ասոնցմէ ոմանց քանի մը փոփոխակներուն, կարելի չէ որոշել ինչն է ասոնց մէջ հայկական նկարագիրը՝ որոնք իբր հայկական կը նկատուին։ Ոմանք շատ անորոշ են և մերթ աւելի ընդհանրապէս արևելեան կամ թիւրք ստեղծագործութեան նկարագիր ունին։

Էջ 219—276, որ «տեղեկութիւններ հայ դիցաբանութեան վրայ» տիտղոսին տակ կամփոփուի, արդէն ալ բուն փոլքլորի չէ պատկանիր, և գեղեցիկ դիտողութիւններ ու թելադրութիւններ կը բովանդակէ հայ դիցաբանութեան մասին, որոնք կրնան ամբողջացնել հայ պանթէոնին պաշտամունքը։ Ինչ որ ինք այս մասին հաւաքած է հայ ժողովրդական հաւատալիքներուն նկատմամբ, ամենէն աւելի անտիպն ու նորն են հայ ազգագրութեան նկատմամբ։ Կը նշանակեմ միայն ինչ որ գրած է աղբիւրի նկատմամբ։ Էմին յիշատակած է արդէն, թէ հայերը մասնաւոր պաշտամունք մը ունէին Ջուրին՝ զոր կը կոչէին աղբիւր աղբէր հակառակ քոյր կրակին։ Սրդ՝ Մ. Չերազ կը յիշատակէ երգ մը աղբիւրի այս պաշտամունքին որ շատ հին կերևի։ Ահա թէ ինչ կը մաղթէ այս երգը, հայ աղջիկներու բերնով.

Առ հատիկ,
Տուր Զատիկ,
Առ բարի,
Տուր գարի.

Միայն թէ՝ Մ. Չերազ կը կարծէ, թէ զատիկ պէտք է փոխանակել հացիկով ինչպէս կըսեն ոմանք։ Բայց ես կը կարծեմ, թէ հոս շատ լաւ կրնայ մնալ նոր զատիկ, որ ոչ թէ քրիստոնէական ծանօթ տօնը կը նշանակէ, ֆրանս. pâques, այլ մեր հեթանոս հայերէնին մէջ կը նշանակէր միանդամայն ազնիւ կերակուր մսով պատրաստուած, համաղամ, կազմուած ինչպէս խորտիկ, կերուխում, ուրախութիւն. և թերևս այս անուամբ Զատիկ ատուած մըն ալ ունէին հայք, իբր համապատասխան Բաքոսի։ Այս մասին համեմատել նաև մեր յօդուածը՝ «Բազմավէպ» 1907 էջ 106.

Պ. Մինաս Չերազի աշխատութեան այս մասը մեծ հետաքրքրութեամբ պիտի կարդացուի նաև եւրոպացի գիտնականներէ։

Հ. Ն. Անդրիկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 30 յունիսի

«Մշակի» № 121-ում կարդացինք Ախալքալաքից Ծիսական թղթակցութիւնը, որով նա յայտնում է դժգոհութիւն քաղաքումս տեղի ունեցած հոգաբարձական ընտրութեան առիթով եղած բողոքի դէմ՝ այսպիսի խօսքերով. «Բուէարկութեան ժամանակ քուէարկվողներից մէկը չէ ընտրվում և դայրացած այդ բանից՝ առա 3—4 օր է, ինչ թուղթը ձեռին ընկել է սրճարանները՝ մոլորեցնելով ժողովրդին այն մասին, որը ժողով իսկ եկած չէ եղել, խաբելով թէ՝ ընտրութեան թերթն է, ստորագրել է տալիս»։ Բայց որովհետև այդ ժողովում ընտրվելի թեկնածուներից բոլորն էլ ընտրվել են բացի ինձանից, հետևաբար Ծիսական մէջ բերած վերոյիշեալ պարբերութիւնը ինձ է վերաբերում, որին և պարտք եմ համարում տալ իմ ստուգապատում պատասխանը։

Ժողովը չորրորդ հրաւէրից յետոյ հաւաքեցի է կայացել ոչ թէ նրա համար, որ ժողովուրդը «քար անտարբերութեամբ» է վերաբերվել դէպի այդ ընտրութիւնը, որ ընդհակառակը նրա սրտին շատ մօտիկ առարկան է եղել միշտ, այլ այն պատճառով, որ հէնց առաջին անգամ հրաւէր լինելուն՝ դէպի հոգաբարձական պաշտօնը հրապուրված երկու անհատների ագիտատօրներ մտնելով հասարակութեան խաւերի մէջ՝ պղտորել և յուզել էին ժողովրդի մտքերը, որ զզուանք ցուցնելով բարոյք էր համարել չը մասնակցել մի այդպիսի շինծու և միտումաւոր ժողովի, որից օգտվելով՝ ագիտատորները ճարել էին իրանց համար բաւականին մարդիկ, որոնցով և կայացնելով ժողովը՝ կատարեցին մի հակաժողովրդական ընտրութիւն, որը բացի այն, որ եղել է շինծու, գործառնութեան մէջ էլ ունեցել է մի շարք խոշոր անկանոնութիւններ։

1) Նախ քան ժողովի բացումը չեն ստուգվել մասնակցողների անձնաւորութիւնները։ 2) Թեկնածուներից մինը ժողովի սկզբից 3—4 ծխականների քուէներ տուփերում գլորելուց յետոյ՝ վերցնում է իր տուփը, իբր չը ցանկանալով ընտրվել, իսկ ժողովը ցրվելուց յետոյ հաւաքվում են մի քանի մարդ միայն և կատարելով քուէարկութիւն՝ ընտրում են միևնոյն պարոնին հոգաբարձու, այն ինչ բազմամարդ ժողովի առջև հարկաւ պիտի սևանար։ (Ժողովին մասնակցողների թիւը եղել է 81, որոնց ցրվելուց յետոյ այս պարոնը ընտրվում է 24 ձայնով ընդդէմ 11-ի)։ 3) Չը նայելով որ ընտրութեան ժամանակ դրվել է և իմ թեկնածութիւնը (իմ բացակայութեամբ), սակայն ժողովի արձանագրութեան մէջ այդ մասին ոչ մի խօսք չէ գրված, կարծես թէ իմ թեկնածութիւնը գրված չը լինէր։ 4) արձանագրութիւնը ստորագրել է տրվում ժողովի հետևեալ 5 օրերը փողոցներում, արձարաններում, գինետներում և զանազան հիմնարկութիւններում շրջեցնելով ուսումնարանի ծառայի ձեռքով։

Ահա այս և այսպիսի անկանոնութիւնների դէմ է եղել, որ ժողովուրդը զայրացած բողոքել է հոգևոր իշխանութեան, խնդրելով բեկել ընտրութիւնը։

Իսկ այդպիսի մի բողոք, բնական է, պիտի ստորագրվէր ձեռք ձեռք շրջեցնելով, քանի որ նախ քան այս ընտրութեան արձանագրութիւնն ես ստորագրվել էր միևնոյն կարգով։ Ի՞նչ է նշանակում է այն բանին, որ բողոքագիրը շրջեցրել եմ ես և տուել ստորագրելու իբր «խաբելով թէ ընտրութեան թերթն է», այդ միանգամայն անարդար մեղադրանքի մասին ես առաջարկում եմ Ծխականին՝ մի ամսվայ ընթացքում լրագրութեան միջոցով յետ վերցնելու իր այդ խօսքը—«խաբելով թէ ընտրութեան թերթն է»—հակառակ դէպքում ես ստիպված կը լինեմ իմ պատիւը վերականգնելու համար պահանջել նրա ծածկված անունը և հրաւիրել դատարան, քանի որ բողոքը ստորագրել է մեծամասնութեամբ ժողովրդական գիտակից մասը և ստորագրել տալու համար անցել է այն էլի ուրիշ մի քանի մարդկանց ձեռքը, որ հարկաւ կապացուցվի իր ժամանակին։

Վերջացնելով խօսքս՝ այժմ հարց եմ տալիս իրան Ծխականին։ Եթէ այդ ընտրութիւնը գիտակցական էր և ապօրինի չէը, ապա ինչու համար 6 ընտրվածներից 4-ը բարեխղճաբար իսկոյն իրանց հրաժարականները ներկայացրին և մնացին միայն երկու ուխտեալ ընտրվածները։ և թէ՝ քանի որ ընտրութեան ժամանակ ես չեմ ընտրվում և դայրանում եմ այդ բանից, արդեօք ինչպէս կարող էի մոլորեցնել ժողովուրդին, որ ձեռքիս ընտրութեան թերթն է, և «խաբելով» ստորագրել տալ։ բացի այս՝ չէ՞ հակասում իր այն խօսքերին, որ ստորագրել է տուել «ժողովրդի այն մասին, որը ժողով իսկ չէ եկել»։

Մի՞թէ ժողովին չը մասնակցողները իրաւունք պիտի ունենային ստորագրելու ընտրութեան թերթը, որ ես նրանց «խաբէի»։

Ցով. Դարբինեան

—

Նոր-Բայազէտ, 6 յուլիսի

Կարդացինք «Մշակի» № 135-ում Տեղացու «Ո՞վ հաւատաց» վերնագիրը կրող յօդուածը։

1) Տեղացու յօդուածից երևում է, որ հոգաբարձութիւնս միայն այս տարի է քաղաքից 1000 ր. նպաստ ստանում, այն ինչ այս հինգերորդ տարին է, որ քաղաքը ստանում է 440 ր. ռոճիկ։ 3) օր. Վ. Խունունց, աւարտել է Շուշու ռուսաց Մարիամեան օրիորդաց դպրոցը, այստեղ առաջին տարին է, ստանում է 480 բուրլի ռոճիկ։ 4) տիկին Ովսաննա Լալայեան, աւարտել է Մոսկվայի իգական գիմնազիայի 8-ը, այստեղ առաջին տարին է, ստանում է 480 ր. ռոճիկ։ Դպրոցի ծախսերը հոգացվում են ուսման վարձից (1300 ր.), ծխական եկեղեցուց (300 ր.), ներկայացումներից (100 ր.), խանութներից (2000 ր.) և պատահական նուէրներից (10 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է և ունի խոշոր անյարմարութիւններ. ունի գրադարան 82 կոտոր հայերէն և ռուսերէն գրքերով, ստանում է մի քանի հայերէն թերթ (Նոր-Դպրոց», «Հասկեր» և «Աղբիւր»)։

Ցոր.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 61 սովորողներով, որոնցից 41-ը տղաներ են, իսկ 20-ը աղջիկ։ Դասատուն է պ. Լևոն Մէլիք-Մանուչարեանը, որը աւարտել է Շուշու թեմականը, այստեղ երրորդ տարին է, ստանում է տարեկան 420 ր. ռոճիկ և բնակ., ռոճիկ, ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են ուսման վարձից և ծխական տուրքից (80 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է և խիստ անյարմար, զուրկ է գրադարանից, չէ ստանում ոչ մի թերթ։

Ջրակոյս.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 40 սովորողներով, որոնցից 36-ը տղաներ են, 4-ը աղջիկ։ Դասատուն է պ. Արամ Բաբայեանը, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը, ստանում է 300 ր. ռոճիկ (յունվարից) և բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից և կուլտ. Միութեան նպաստից (180 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է, ունի գրադարան 91 կոտոր հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում ոչ մի թերթ։

Տումի.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 52 սովորողներով, որոնցից 34-ը տղաներ են, 18-ը աղջիկ։ Դասատուն է պ. Ռուբէն Տէր-Աստուածատրեանը, որ աւարտել է Շուշու բէյալականը, ստանում է 225 ր. ռոճիկ, բնակ., ծառայ, վառ. և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից (200 ր.) և պ. Աթաբէկեանի նուէրից (25 ր.)։ Դպրոցը չունի սեփական շէնք, զուրկ է յարմարութիւններից, ունի գրադարան 68 կոտոր հայերէն և ռուսերէն գրքերով, չէ ստանում և թերթ։

Բանազուր.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 63 սովորողներով, որոնցից 54-ը տղաներ են, 9-ը աղջիկ։ Դասատուն է պ. Եփրեմ Տէր-Մանուէլեանը, որը ունի թեմական դպրանոցի 4-րդ դասարանի վկայական, այստեղ առաջին տարին է, ստանում է 420 ր. ռոճիկ, բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից և ծխական տուրքից (200 ր.), չունի սեփական շէնք, վարձովի է և յարմար. դպրոցը զուրկ է գրադարանից, չէ ստանում և թերթ։

Սարէն-շէն (Շաղախ).—Դպրոցն ունի երեք բաժանմունք 34 սովորողներով, որոնցից 32-ը տղաներ են, իսկ 2-ը աղջիկ։ Դասատուն է պ. Սամսոն Յովհաննէսեանը, որը աւարտել է Երևանի թեմականը, այստեղ առաջին տարին է, ստանում է 420 ր. ռոճիկ, բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ Դրպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքերից (160 ր.) և պ. Բախշի-բէկ Իւզբաշեանի նպաստից (200 ր.)։ Դպրոցը չունի գրադարան, չէ ստանում և թերթ։

Ծաղկաձոր.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 54 սովորողներով, որոնցից 48-ը տղաներ են, 6-ը աղջիկ։ Դասատուն է պ. Դանիէլ Խրշեանը, որ աւարտել է Գէորգեան ճեմարանի դասարանական բաժինը, այստեղ առաջին տարին է, ստանում է տարեկան 450 ր. ռոճիկ և բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից (2), պ. Աբրահամ Նասիբեանի մշտական նպաստից (450 ր.), ծխական եկեղեցուց (25 ր.), ծխական տուրքից (100 ր.)։ Դպրոցը չունի գրադարան, ստանում է «Աղբիւր» և «Գիւղատնտես». ունի սեփական շէնք, բաղկացած երկու սենեակից, որ կառուցել է պ. Ա. Նասիբեանը իր ծախքով։

Վաղահաս.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 24 սովորողներով (մէկ թուրք), որոնցից 22-ը տղաներ են, 2-ը աղջիկ։ Դասատուն է պ. Սեդրակ Պետրոսեանը, որ աւարտել է Շուշու թեմականի VI-ը, այստեղ երրորդ տարին է, ստանում է տարեկան 400 ր. ռոճիկ և բնակ., ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է և անյարմար մութ, խոնաւ, ցածր ու հողէ պատերով։ Դպրոցի ծախսերը հոգացվում են ծխական տուրքից (117 ր.), ուսման վարձից և պ. Ց. Խունունցի նպաստից։ Դպրոցը չունի գրադարան, չէ ստանում և թերթ։

Զատիկ Ռասաջղ.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 29 սովորողներով (բոլորը տղաներ), որոնցից 3-ը թուրք են։ Դասատուն է պ. Ստեփան Տէր-Մկրտչեանը, որ աւարտել է Ներսիսեան դպրոցի V-ը, այստեղ երկրորդ տարին է, ստանում է տարեկան 400 ր. ռոճիկ և բնակ., ծառայ, վառելիք և լոյս։

Դպրոցը չունի սեփական շէնք, վարձովի է (տարեկան 6 ր.) և անպէտք իրրև դասատուն։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքից և պ. Ց. Խունունցի նպաստից։ Դպրոցը զուրկ է գրադարանից, չէ ստանում և թերթ։

Մէծ-շէն.—Դպրոցն ունի երեք բաժանմունք 47 սովորողներով, որոնցից 36-ը տղաներ են, 12-ը աղջիկ։ Դասատուն է պ. Աբգար Տէր-Առաքելեանը, որը աւարտել է Երևանի թեմականը, ստանում է 480 ր. ռոճիկ և բնակարան, ծառայ, վառելիք և լոյս։ Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից, ծխական տուրքերից (160 ր.) և պ. Բախշի-բէկ Իւզբաշեանի նպաստից (200 ր.)։ Դպրոցը չունի գրադարան, չէ ստանում և թերթ։

Առաքել Առաքելեան

(Կը շարունակվի)

տալիս է 1000-ական ր. նպաստ. և այս մինչ դաղանի էր Տեղացուն։

2) Տեղացին մեղադրում է մեզ, որ դպրոցը առաջներում ունեցել է մինչև 400 աշակերտ, իսկ այս տարի 227, և ձրիների թիւն էլ պակասել է։ Սակայն եթէ Տեղացին իր նիւթական քննէր և ապա հրապարակ գար, կը տեսնէր, որ դպրոցի բացման օրից չէ եղել 400 աշակերտ-աշակերտուհի։ 1905/6 ուս. տարում դպրոցում եղել է 222 աշակերտ, որից 58 ձրի. 1906/7 տարում՝ 314 աշակերտ, 77 ձրի. 1907/8 տարում՝ 316 աշ., 69 ձրի. 1908/9 տարում՝ 294 աշ., 75 ձրի. 1909/10 տարում՝ 326 աշ., 89 ձրի. 1910/11 տարում՝ 283 աշ., 87 ձրի. 1911/12 տարում՝ 276 աշ., 106 ձրի։ Բերված թուերից պարզ երևում է, որ դպրոցի բացման օրից ոչ մի տարի դպրոցը այնքան ձրի աշակերտութիւն չէ ունեցել, որքան այս ուսումնական տարին։

3) Տեղացին մեղադրում է, որ «հոգաբարձութիւնը քաղաքից նպաստ ստանալով՝ այնու ամենայնիւ փակել է 6-րդ բաժանմունքը»։ Նախ նախկին հոգաբարձական կազմը 595 ր. պարաք էր թողել ներկայ կազմի վրա, իսկ 6-րդ և 5-րդ բաժանմունքները միացած էին. թէ որքան արդիւնք ցոյց կը տան միացած դասարանները, դրա մասին աւելորդ ենք համարում խօսել։ Հոգաբարձութիւնս բարւոք համարեց փակել մի տարով 6-րդ բաժանմունքը նախ դէֆիցիտը չը կրկնապատկելու համար և երկրորդ՝ դպրոցը ազատելու պարաքից, որպէս զի յաջորդ տարին, այսինքն 1912/13 ուսումն. տարին, հնարաւորութիւն ունենայ բաց անել 6-րդ բաժանմունքը առանձին դասարանով. և այսօր դպրոցը ոչ մի կօպէկ պարտք չունի, իսկ առաջիկայ ուսումն. տարին ունենալու է 6-րդ բաժանմունք առանձին դասարանով։

4) Տեղացին մեղադրում է, որ ուսուցիչների մեծ մասը անփորձ էին. ասացէք, պ. Տեղացի, դա ինչ մեղադրանք է. այդ անփորձ ուսուցիչները լուսնի վրա պէտք է փորձվեն. թող ութ ուսուցիչներից մի երկուսը անփորձ լինեն. կամ հոգաբարձութիւնը լրագրութեան մէջ յայտարարութիւն է տալիս, ուսուցիչները՝ բոլորն էլ միջնանակարգ կրթութիւն ստացածներ՝ խնդիր են ներկայացնում, հոգաբարձութիւնը ինչպէս իմանայ թէ դրանցից որն է բարեխիղճ կամ որը անբարեխիղճ։

5) Կարծում ենք, որ յայտնի կը լինի պ. Տեղացուն, որ պ. Խաչատուր Աֆրիկեանի «Սաղ» կոչված տեղը՝ դպրոցին նուիրաբերվելուց յետոյ 100 ր. աւել չի ծախվել. նախկին կազմը գանգատվելով Նորագուղ գիւղի ընակիչների վրա, որոնց այդ խոստումը ուզացրել էին իրանց նախկիրներին, դատարանով որպէս վնաս պահանջ էին դրել 800 ր., հոգաբարձութիւնս ի նկատի առնելով նուիրատու Աֆրիկեանի ցանկութիւնը և գիւղացիների ծանր տնտեսական պայմանները, ստացաւ այնքան, որքան սովորաբար ծախվել է զանազան կապալառուների վրա։ Իսկ եթէ յօգուտ մի դպրոցի քանդէինք ամբողջ գիւղը և դէմ գնայինք նուիրատուի ցանկութիւնը, այն ժամանակ, պ. Տեղացի, դուրս չէինք գայ և քարեր նետի հոգաբարձութեան գլխին։

Մոմավաճառութիւնը հոգաբարձութիւնս աւելի հիմնաւոր դարձնելու համար կապալով է տուել Երևանի ամբողջ թեմի կապալառու Միք. Սարգսեանին։ Որպէսզի ցոյց տանք, թէ որքան անխղճօրէն էք մօտենում հարցերին, կասենք, որ ոչ մի տարի մոմավաճառութիւնը այնքան արդիւնք ցոյց չէ տուել, որքան այս ուսումն. տարին։

1905/6 ուսումն. տարին տուել է 250 ր., յաջորդ տարիները 300—350 ր., նախորդ կազմի օրոք 400 ր., իսկ մենք հասցրինք 500 բուբլու։ Զգում էք, պ. Տեղացի, թէ ինչպիսի ընդունակութիւն ունէք փաստերը խեղաթիւրելու։

Եթէ, պ. Տեղացի, չէք բաւականանայ մեր այս տուած բացատրութեամբ և նորից զրպարտչի դերում հրապարակ դուրս կը գաք, այն ժամանակ հոգաբարձութիւնս, հակառակ իր ցանկութեան, ստիպված կը լինի նախկին հոգաբարձութեան շատ տխուր պատմութիւնը նորից հրապարակ հանել, որպէսզի ընթերցող հասարակութիւնը դատափար կազմէ, թէ Նոր-Բայազէտի ծխականները նախորդ հոգաբարձական կազմի վերաբերեալ են իրանց հաւատը կորցրել, թէ ներկայ կազմի։

Ի տեղի նախագահի հոգաբարձութեան՝
Հայրապետ Խաչատրեան
Անդամներ՝ Գէորգ Բուդումեան, Մատթէոս Աֆրիկեան, Խաչատուր Բունիաթեան, Երեմիա Տէր-Վարդանեան։

ԻՍԿԱԿԱՆ ՊՐՕՎՈԿԱՏՕՐՆԵՐԸ

Բաքու, 23 յունիսի

«Մշակի» № 130-ի մէջ «Ընթերցողի ուշադրութեանը» վերնագրով մի նամակ էի տպագրել, ցոյց տալու համար թէ որ աստիճանի ստոր են մարդիկ, այն էլ իրանց հասարակական զեկավար անուանող մարդիկ, որ բլոկ են կազմում անմեղ ցրիչ-լրագրավաճառների հետ ընդդէմ «Մշակի» հատավաճառութեան և այլն։

Այժմ «Հօրիզոնի» № 132-ում Ց. Տ.-Գր. իմ գրածներս սուտ է համարում, թէև միևնոյն ժամանակ իր նամակի սկիզբներում խոստովանվում է, որ, այո, կարող է լինել, որ «Նոր-Լոյս» բիւրօն իրան ձեռընտու չէ համարել երկրորդ ձեռքից ստանալ «Մշակը», ցրիչները այնպէս կարծած կը լինեն, որ «Մշակը» դադարել է և այլն, և այլն, և ապա անցնում է պրօվոկացիայի իմ և «Մշակի» միջև ջուր պղտորելու։

Ես փոխանակ «Հօրիզոնի» տեղիս թղթակցին պատասխանելու՝ կը պատասխանեմ իրան Լէօին, որին դուր գալու համար և գրված է այդ ամբողջ յօդուածը։

Ուստի և իմ խօսքը կուղղեմ իրան Լէօին։

Եւ այդպէս վարվելով, կարծում եմ, հարցն աւելի կարճ կապած կը լինեմ։

Ես մշակական եմ եղել թէ չէ, այդ Լէօն թող ինքը ասէ։

Լէօն «Մշակի» խմբագրատնից հեռանալուց յետոյ տեղի ունեցան լրագրական յարձակումներ մանաւանդ Հ. Առաքելեանի հասցէին Լէօի և կօմպանիայի բերանով ու միջոցով։ Զը նայելով ասելու բաներ շատ ունէի, բայց չը մասնակցեցի, լուռ ընթերցողի դեր կատարեցի, որպէսզի վերջ դրվի, հրապարակը մաքրվի և մութ գիշերները պատի տակից գաղտագողի քարեր նետող լէօական բանակը այս անգամ էլ իմ եախաս չը բռնի, 2—3 տարի էլ ինձ հայհոյի։

Լէօն չը պիտի թոյլ տար տպագրելու Ց. Տ.-Գ.-ների նամակը իմ դէմ, ի նկատի ունենալով որ ինքը Լէօն բերան առ բերան խօսել է հետս և լաւ էլ ճանաչում է ինձ, թէ ես մշակական եմ թէ չէ։ Սակայն «Հօրիզոնի» էջերում տպագրելով յիշեալ նամակը՝ 20 տարի շարունակ կովկասեան և Կ. Պոլսի լրագիրներում 20—25 ծածկանուններով հաղարաւոր յօդուածների հեղինակի և լրագրական աշխատակցի դէմ, Լէօն ցոյց է տալիս, որ ամեն տեսակի սրբութիւն, ազնուութիւն և հասարակ մարդկային պատիւը ոտնատակ է տուել։

Դեռ թողնում եմ սրանից 10 տարի առաջ, երբ մի քանի օրով Թիֆլիս էի եկել վրաց ազնուականութեան բանկային գործով, Լէօի հետ ունեցածս տեսակցութեան մանրամասնութիւնը, այլ առայժմ ընթերցողների առաջն եմ դնում 6—7 տարի առաջ «Մշակի» խմբագրատան մէջ Լէօի հետ խօսածները, որից կարելի է համեմատել Լէօի այլանդակ և յուդայական պատկերը ներկայ Լէօի հետ։

Հ. Առաքելեանի հետ «Մշակի» խմբագրատան գրասեղանի շուրջը նստած խօսում էինք հայ ենիչերիների սխրագործութիւններից, որոնք մահ էին սպառնում նրանց, որոնք «Մշակ» կը ստանան կամ կը կարդան։

Հ. Առաքելեանը ցոյց տուեց բաժանորդների մատեանը, ասելով որ Թաւրիզի 70 բաժանորդներից մնացել է, եթէ յիշողութիւնս չէ դաւաճանում, 3 հատ։ Ցայտնեց և այն, որ բաժանորդներից շատերը նամակներով խնդրում են, որ «Մշակը» փակ ծրարի մէջ ուղարկեն, որովհետև հայ-ենիչերիները թոյլ չեն տալիս «Մշակն» ստանալ ու կարդալ։ Առաքելեանը խմբագրատնից դուրս գնալուց յետոյ, ես մտայ միւս սենեակը, ուր Լէօն գրասեղանի առաջ նստած Սամուէլ Սմայլի «Ինքնօգնութիւն» գրքից քաղուածքներ էր անում (Փիլիպպոս Վարդանեանի գերմաներէնից թարգմանած)։

— Ի՞նչ երկար խօսեցիք Առաքելեանի հետ,—ասաց Լէօն գրիչը վայր դնելով և ձեռքը դէպի ինձ երկարացնելով։

— «Մշակի» թշնամիներից էինք խօսում, Թաւրիզում նրանց գործած սխրագործութիւններից։

— Կարծում էք միայն այդ լրբութիւնները Թաւրիզում են անում,—ասաց Լէօն թաշկինակով իր գլուխը սրբելով.—հէնց մեր առաջ, Թիֆլիսում, Երևանեան հրապարակի վրա «Մշակ» գնողի ձեռքից առնում ու պատռում են...

— Ինչով կը վերջանան այդ խայտառակութիւնները, պ. Բաբախանեան։

— Նրանով,—պատասխանեց Լէօն ձեռքը սեղանին զարկելով,—երբ այդ խայտառակ գործի հեղինակներ՝ Խաչիները, Ահարոնեանները և Թոփչեանները հրապարակից կը քաշվեն...

— Մթթէ այդ պարոններն են այդ անամօթ գործի հեղինակները։

— Այո, այո, հէնց նրանք են կարգադրում, որ «Մշակը» ամեն տեղից հալածվի։ Եւ եթէ,—շարունակեց Լէօն ոգևորված,—Հ. Առաքելեանի հաստատակամութիւնն ու կրակոտ եռանդը և Բալանթարի սառնասիրտ համբերատարութիւնը չը լինեն, վաղուց պիտի փակված լինէր «Մշակը»։ Մալումեանը լուութեամբ դաւաճանեց «Մշակին», իսկ միւսները շլացան ոսկիների զոյնից։ Խմբագրատանը և Թիֆլիսում մնացել ենք 4—5 հոգի, բայց մխիթարվում ենք, որ գաւառական աշխատակիցները, թղթակիցները յատուկութեամբ կանգուն են և շարունակում են իրանց գործը, հաւատարիմ մնալով իրանց դիրքերում և մեզ էլ են խրախուսում։

— «Մշակի» զարկերակը խմբագրութեան կազմն է, պ. Լէօ. եթէ դուք չը վհատվէք, անուշադիր թողնէք զանազան աղբիւրներից ստացվող անստորագիր սպառնական նամակները, որոնց մասին ասում էք, մենք, թղթակիցներս, սիրտ ու հոգի տուողներ կը լինենք ձեզ։

— Ես մինչև մահս չեմ բաժանվի ինչպէս «Մշակից», նոյնպէս և մեր պապաշից (Առաքելեանից)։ Եթէ այդ պատկառելի մարդը իր գրիչով կանգնած է դաշոյնների առաջ, մենք, նրան հետևողներս, մեր կուրծքը պիտի դէմ տանք Առաքելեանի գրչի վրա բարձրացող դաշոյնին։

Ահա Լէօի հետ խօսածս, որից յետոյ, թէև Թիֆլիսում պատահել եմ, բայց չեմ խօսել։ Այդ խօսքերը Լէօի բառացի ասածներն են։ Բայց, ընթերցող, այդ նոյն Լէօն, որը Առաքելեանի վրա բարձրացող դաշոյնին իր կուրծքն է դէմ տալիս և նոյնը մեզ առաջարկում, այսօր, «Հօրիզոնի» մէջ ինձ «Մշակի» հակառակորդ է յայտարարում, իսկ ալեզարդ Հ. Առաքելեանին «Հօրիզոնի» էջերում առաջարկում է «իր հողաթափները կրծել»... մի նախադասութիւն, որը ոչ Շուշու Թօփխանայի հայհոյարան փայտավաճառներից է լսված, ոչ Բագուի Ղուբա-Մէյդանի գրպանահատներից, ոչ Շամախու Չայչիխանաների անդամթիրեաքջէջ-լութիներից և ոչ էլ Թիֆլիսում Կուրի ափին ծալապատիկ նստած կինտոյից։ Եւ այդպիսի խօսքերը «Հօրիզոնի» ընթերցողները մարսում, անուշ են անում...

Ցոյց տալու համար, թէ Հ. Առաքելեանի այժմեան հակառակորդներն համեմատաբար ոչ-հեռու անցեալում ինչ կարծիք ունէին նրա մասին, աւելորդ չեմ համարում և Սամսոն Ցարութիւնեանի կարծիքը մէջ բերել։

Արծրունու մահից 2—3 ժամ անց, խմբագրատանից հեռագիր ստացվեց Շամախի՝ Ս. Ցարութիւնեանի հացէով, որով դուժում էին մահը։ Ոստիկանատան եաստուլը եկաւ ինձ հրաւիրեց Ցարութիւնեանի մօտ (վերջինս գաւառական քննիչ էր)։ Երբ ուզում էի մտնել դիւանատուն, դռան առաջ Սամսոն Ստեփանիչը հէնց հեռագիրը ձեռին ասաց.

— Սմբատ, ես ճանապարհվում եմ Թիֆլիս, թաղումից յետոյ կը վերադառնամ. դու հասարակութիւնից դրամ հանդանակիր, իսկ ես հէնց այժմեանից կը կարգադրեմ, որ քաղաքի կողմից արծաթէ պսակ դնեն։ Ցայտնիր Սմբատ Սարգիսբէկեանին. դուամբը կը փոխադրեք Թիֆլիս՝ պսակի համար վճարելու։ Թաղման օրը հոգեհանդէստ կատարել կը տաք եկեղեցում։

Սարգիսբէկեանի, Ներսիսեանի Գ. և Վ. Սերգէյեանի հետ կատարեցինք Ցարութիւնեանի կարգադրութիւնները։ Երբ Ս. Ցարութիւնեանը վերադարձաւ, նոր խմբագրի և «Մշակի» շարունակութեան մասին խօսակցութիւն ունեցանք։ Նա մի շարք անուններ տալով, ինչպէս Ալ. Քալանթարի, Ե. Մալումեանի և այլոց, խօսքը վերջացրեց հետևեալով.

— Համբարձում Առաքելեանի հերկայութիւնը և ակտիվ մասնակցութիւնը խմբագրութեան մէջ անպայման անհրաժեշտ է, և մեզանից իւրաքանչիւրը այդ միտքը պիտի տարածէ մշակականների շարքերում։ Նա, Առաքելեանը, որչափ գրող է, այնչափ խելօք և հեռատես մարդ է։

Առաքելեանին ես այն ժամանակ չէի ճանաչում, առաջին անգամ Ցարութիւնեանից իմացայ նրա հեռատես և խելօք լինելը։

Արդ՝ այդ ժամանակ Լէօն իսկական մշակական էր, այդ չը գիտեմ. բայց թէ Արծրունու կենդանութեան ժամանակն էլ «Մշակի» բարեկամն եմ եղել, այդ Ս. Ցարութիւնեանը լաւ գիտէ։ Ս. Գարագաշ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Հայազգի Նորատունկեան էֆէնդիի թիւրքաց արտաքին գործերի մինիստրի լուրջ պաշտօն ստանձնելը զարմանք է առաջ բերում ամենուրեք։ Ռուսական զեկավար շրջանակներում յոյս ունեն, որ նոր մինիստրը իր փորձված հեռատեսութեամբ ցանկալի բարեկամական յարաբերութիւններ կը ստեղծէ Ռուսաստանի հետ։

✦ Իտալական կառավարութիւնը գոհ է թիւրքաց նոր կաբինետի կազմից։ Նորատունկեանի վրա մեծ յոյսեր են դրվում։

✦ Դարդանելի նոր ռմբակոծութիւնը խախտեց եւրօպական կաբինետների հանգիստ տրամադրութիւնը։ Սկսվել է կրկին դիւանագիտական ժաքերի փոխանակութիւն։ Ամենից շատ տուժողը ռուսական հացահատիկ արտահանող ֆիրմաներն են, որ այժմ ահագին վնասներ են կրում։ Լսվում է, որ Դարդանելը փակ է։ Հարցը սատանում է սուր կերպարանք։ Ռուսաստանը պատրաստվում է բողոքել։

✦ Եւրօպական լրագիրների ասելով, իտալական ռազմանաւերը մտադրութիւն են ունեցել գրոհ տալ և արշաւանքով մտնել Դարդանելը։ Բայց վերջինս այնպէս ամուր է պաշտպանված, որ իտալացիների նախագիծը երբէք չէ կարող իրականանալ։ Իտալական ռազմանաւերը մի քանի թնդանօթ պարպելուց յետոյ շտապել են հեռանալ։

✦ Կ. Պոլսում տիրում է յուսահատ դրութիւն։ Երիտասարդ թիւրքերի միակ նեցուկ մնացել է գահաժառանգ Իզզէդդինը, որի կեանքին վտանգ է սպառնում։ Սուլթանը իր որդու կեանքը փրկելու նպատակով պատրաստ է հրաժարվել գահից։

✦ Լօնդօնում պաշտօնավարող թիւրքաց դեսպան Թէվֆիկ փաշան հրաժարվեց կաբինետ կազմել այն պատճառով, որ մերժում ստացաւ ալբանացիներին ընդարձակ զիջումներ տալու առաջարկութեան նկատմամբ։ Բացի դրանից, նա պայման դրեց նոր կաբինետի մէջ ոչ մի երիտասարդ թիւրք մինիստր չը մտցնել, մինչ այդ առաջարկը չընդունվեց։

✦ Ալբանիայի ապստամբ օֆիցերները իրանց կողմն են թերում Ադրիանուպօլսի զօրքերին։ Ապստամբ ալբանացիները դիմում են Պրիզրէնի և Սկիւտարի վրա։

Խմբագիր՝ Հ. ՍՈՒԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԴԵՍԻԱՅԻ եկեղեց. ծխական օրիորդաց եռամեայ, և տղայոց քառամեայ դպրոցների համար հարկաւոր են

ուսուցիչ-ուսուցչուհիներ:

Ուսուցչին կը տրվի տարեկան ռոճիկ 400 ր., ուսուցչուհուն՝ 350 ր., իսկ միւսին՝ 300 ր.։ Բացի ռոճիկից բոլորն էլ կը ստանան սենեակ, վառելիք և ծառայ։ Ստանձնող ուսուցիչ-ուսուցչուհիները կունենան շաբաթական 25—26 դաս և հերթ. վերակացութեան պաշտօն։ Ցանկացողները թող անյապաղ դիմեն հետևեալ հասցէով. Черезъ г. Моздокъ, въ м. Эдиссію, Попечительству Армянскихъ училищъ.
(ա. օ.) 504. 3—2

ՀԻՒԱՆԴՆԵՐ,
ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ!

Երևան են եկել մեր Սպէրմինի սակաւարժէք նմանողութիւնները, որոնք ըստ ապրեցութեան ոչ մի առնչութիւն չունեն մերինի հետ, և դեռ յաճախ նրանք պարունակում են իրանց մէջ առողջութեան համար վնասակար նիւթեր։

Նեվրասթենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստերիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային թունաւորման հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (չարութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախում, պէրէբոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, ալկոհոլիզմի, ողնաուարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետևանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների գիտութիւնները։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ

անուան վրա և հեռու մնալ զանազան անուններով երևան եկող բոլոր մաշմանրից և հեղուկներից, որոնց սակաւարժէք. համար հրատ. ունենք առանձին բրոշիւր, որն ուղ. է ձրի՝ ՍՊԷՐՄԻՆԻ մասին եղած նոր գրական. հետ միասին։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ПРОФЕССОРЪ Дръ ПЕЛЬ и С-ья
ПОСТАВЩИКИ Двора
ЕГО ИМПЕРАТОРСК. ВЕЛИЧЕСТВА
С.ПЕТЕРБУРГЪ
В.О. 7 линія 18

(П 68382) 16—10

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ.
Լոյս տեսաւ Ն. Ա. Ռուբակինի
ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԿՐԱԿ
Պատմական պատմուածք բազմաթիւ պատկերներով։ Թարգմ. Մ. Պ.։
Գինն է 50 կ օպ.։ Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։ Պահեստը Ընկ. մօտ։
Հասցէ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское О-во. Бебутовская ул. № 25.
(հ. ու.) 500. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԱՍ. ՏՈՒԱԾԱՆՆԻ (Մէյդանի ս. Գէորգ) եկեղ.-ծխ. երկսեռ (խառն) դպրոցի համար հարկաւոր է **ռուսաց լեզուի ուսուցչուհի,** որը կունենայ դաբաթական 18 դաս, ռոճիկ 480 բուբլի տարեկան, և **թուաբանութեան ուսուցչուհի** կամ ՈՒՍՈՒՑԻՉ — 11 դաս, ռոճիկ 300 ր. տարեկան։ Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեան մինչև յուլիսի 20-ը։
Հոգաբարձութիւն
(հ.) 501. 2—2

Լոյս տեսաւ

ԼԷՕ
ՀԱՅ ԳՐՔԻ ՏՕՆԸ

Հրատարակութիւն Հայ Տպագրութեան 400-ամեայ Յոբելեան. Թիֆլիսի Ցանձնաժողովի։ Բովանդակութիւն.—Յոբելեանական Ցանձնաժողովի հրաւէրը։ I. Տառերի գիւտի 1500-ամեակ։ Ի՞նչ է գիրը։ Անգիր հայերը։ Ս. Մեսրոպ։ Սահակ Մեսրոպեան դպրոցը։ II. 400 տարի հայ տպագրութեան ճգնաժամի մէջ։ Սկիզբը։ Զարգացում։ XVIII դար։ XIX և XX դարեր։ Վերջաբան։ Ցաւելուած։
Գինն է 25 կ օպ.
Վաճառվում է Թիֆլիսի և գաւառական քաղաքների բոլոր գրավաճառների մօտ։ Պահեստը «ԳԻՐ» գրավաճառանոցում (Тифлисъ, Книжный магазинъ „ГИРЪ“).
(հ. կ.) 507. 5—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ ներկայ յուլիսի 18-ին, ցերեկվայ ժամը 12-ին, իր ներկայութեամբ տեղի կունենայ ԱՃՈՒՐԴ կապալով տալու Երևանեան հրապարակի վրա՝ Քաղաքային Ուպրավայի ներքևը գտնվող խանութը (Մակէդոնսկիի ծխախոտի խանութը)։ Պայմանները կարելի է տեսնել IV բաժ. դիւանատանը առաւօտեան ժամը 9-ից մինչև ցերեկ. ժամը 2-ը։
(օ.մ.) 495. 3—3

Ներսիսեան Հայոց Հոգ. Դպրոցի Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ առաջիկայ 1912—13 ուսումնական տարվայ համար դպրոցում կան ազատ դասեր. 1) Թուաբանութեան, հանրահաշիւ և եռանկիւնաչափութեան 12 դաս և 2) նկարչութեան 18 դաս։ Դասագիրն է առաջին 12 դասի համար 70-ական ր., իսկ միացած դասերի համար 60-ական ր.։ Մատեմատիկայի գրաւորների համար տրվում է առանձին վարձատրութիւն։ Ցանկացողները պէտք է ունենան մասնագիտական ցենզ։ Խնդիրները ընդունվում են դպրոցի Հոգաբարձութեան անունով մինչև յուլիսի 15-ը։
(1, 12) 455. 3—3

Ընտրութիւններ Պետական Դումայի համար

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ ընտրողներից յայտարարութիւններ ընդունելը և նրանց տեղեկութիւններ մատակարարելը՝ վերաբերեալ ընդհանուր և ռուսական կուրիաների ընտրական ցուցակներին, որոնց կազմել է Ուպրավան, նոյնպէս և յայտարարական բլանկների տրվումը թոշակառուների ու բնակարան վարձողների համար և ընտրական կանոններից քաղուածքներ ստանալը տեղի ունեն Վիճակագրական Բիւրօյում, որ գտնվում է Քաղաքային Ուպրավային կից, ամեն օր՝ ցերեկ. ժամը 12-ից մինչև 2-ը և երեկ. ժամը 6-ից մինչև 8-ը, իսկ տօն օրերը՝ առաւօտ. ժամը 11-ից մինչև ցերեկ. ժամը 2-ը։

Յունիսի 3-ի 1907 թ. «Պետական Դումայի Ընտր. Կանոնների» 57-րդ յօդուածի և Ներքին Գործերի Մինիստրութեան մայիսի 13-ի 1912 թ. Հրահանգի՝ վերաբերեալ ընտրական ցուցակների ինչ ձևով կազմվելն՝ 2-րդ և 3 դր կէտերի հիման վրա, այն անձերը, որոնք ունեն իրաւունք մասնակցելու ընտրութիւններին՝ համաձայն իրանց ունեցած բնակարանների, որոնց համար պետական բնակարանային հարկ չէ վճարվում, և համաձայն իրանց ստացվելիք թոշակագրամի,—ընտրական իրաւունքից օգտվել ցանկանալու դէպքում պարտաւոր են գրաւոր յայտնել Քաղաքային Ուպրավային, ոչ ուշ՝ քան մինչև անուանացուցակների հրապարակումը, ներկայացնելով պատշաճ վկայագրերը, այն է՝ իրանց անունով առանձին բնակարաններ ունեցողները՝ տանտիրոջ հետ ունեցած պայմանագիրը կամ թէ տեղական ոստիկանութիւնից տրված համապատասխան վկայագիր, իսկ պետական, քաղաքային, զեմստվային կամ դասային ու երկաթուղային հիմնարկութիւններում ծառայած լինելուն համար թոշակառու անձերը պիտի ներկայացնեն ոստիկանութեան վկայագիրը Թիֆլիսում կամ Թիֆլիսի գաւառում մէկ տարուց ոչ պակաս գտնվելու մասին, նոյնպէս և պետական գանձարանի կամ այն հիմնարկութեան վկայագիրը, որտեղից ստացվում է թոշակագրամ, սակայն ոչ պակաս մէկ տարուց։

Այն անձերը, որոնք ցանկանում են մասնակցել ընտրութիւններին՝ համաձայն իրանց հօր, մօր կամ կնոջ ունեցած անշարժ կայքերի, Ուպրավային յայտարարութիւն ներկայացնելու հետ միաժամանակ պիտի ներկայացնեն նաև հաւատարմագիր՝ կայքերին ցէնզը իրանց արտօնված լինելուն համար, որպիսի հաւատարմագրերը պէտք է վաւերացված լինեն դերբային հարկով և նոտարական կարգով կամ թէ հաստատված իրանց լիազօրութիւն տուող անձի իշխանաւորի, ոստիկանութեան կամ հաշտարար դատաւորների կողմից։
(ա. օ.) 505. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.